Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13104

Ա. ՄԱՅԻԼԵԱՆ

ՍՐՏԷՆ

891.99
Մ-23

3372
891.99 Կպ.
Մ-23

ԱՆՏՈՆ ՄԱՅԻԼԵԱՆ

ԱՐՄԷՆ

ՊՈՏԿԵՐԱԶԱՐԴ ՎԷՊԻԿ

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի
Պուշկինեան փողոց, № 12.
1903

Дозволено цензурою. Тифлисъ, 10 мая 1903 г.

96023-ԿԿ

28-44թ

I

—Բաւական է, պարոններ։

Ձայնին ոչ ոք չպատասխանեց։

—Բռնվե, Կոստեա, բռնվե, լսուեց այս ու այն կողմից։

—Զարմանալի է. յաջողութիւնը ստուերի նման հետևում է քեզ։ Կարծես թըղթերին էլ կախարդել ես։

—Բաժանիր շուտ-շուտ, լսուեց մի ուրիշ կողմից։

Խաղը շարունակվում էր տենդային դըրութեան մէջ։

—

Յունիսի սկզբների գեղեցիկ գիշերներից մէկն էր։ N. քաղաքը կատարեալ կենդանութեան մէջ էր։ Փիչ առաջ եկած անձրևից և քամուց օդը բաւական ախորժելի էր ու թարմացած։

№ 2003

Քամին փոխարկուել էր քաղցր զեփիւռի, ամպերը մաքրուել էին երկնքի երեսից ու պարզ երկնակամարի վրայ փայլփլում էին բիւրաւոր շլացուցիչ աստղերը։ Մարդու սիրտը հրճվում էր, տեսնելով բնութեան այդ հրաշալիքները և անյագ շընչում էր դուրալի, կենդանարար օդը։ Նա կ'ուզէր դիտել անթարթ ու կարօտալի աչքերով երկնքի երեսին կատարուող հարսանիքը։ Ո՜րքան խորհրդաւոր, ո՜րքան դուրեկան ու բերկրալի էր այդ գիշերը։ Լուսնի խորհանդարտ ճառագայթները ընկել էին մի մեծ շինութեան վրայ, որի գեղեցիկ, ճաշակով զարդարուած ճակատը պարզ կարելի էր որոշել լուսնի շողքերի տակ։ Այդ տան երրորդ յարկումն էր ապրում ուսանող Արմէն Միրոնեանը, որ աւարտելով իրաւաբանական մասնաճիւղը, պատրաստվում էր հայրենիք վերադառնալու։

Նրա խիտ, խարտեաշ և խոպոպիկ մազերը բնականաբար բոլորել էին նրա լայն ճակատն ու պարանոցի շուրջը։ Նա ստէպ-ստէպ մատները սանրաձև մտցնում

էր մազերի մէջ ու յետ գցում, հպարտ գեղեցկուհու նման գլուխը շարժելով և գեղեցիկ գծագրուած յօնքերը մօտեցնելով աչքերին, նման մի մարդու, որ կամենում է մի բան յիշել։ Նրա խոհուն, վճիտ ու սևորակ աչքերի նայուածքը արտայայտում էր նրա ներքին աշխարհը և առաջին դիտողը երբէք չէր սխալուիլ ըմբռնելու նրա պարզ հոգեբանութիւնը։ Դէմքն աւելի թուխ էր. այտերը հազիւ կարմրին էին տալիս. սակայն վշտակիր գեղեցկութիւնը փայլում էր նրա դէմքին և այդ բաւական ներդաշնակում էր նրա հեզահամբոյր դէմքի գծագրութեանը։

Նա իր վարք ու բարքով, սկսած աշակերտական սեղանից, եղել էր միշտ օրինակելի, միշտ աղնիւ սրտի տէր։ Նա սիրում էր մերկացնել անաչառ կերպով բոլորի պակասութիւնները և պախարակելի կողմերը՝ ցոյց տալով իսկական ուղին, որով պիտի ընթանային, և դրա համար էլ շատերը լարուել էին նրա դէմ։ Ով ինչ ուզում էր թող մտածէր, ինչ գաղափար ուզում էր, թող կազմէր իր մասին,

հոգը չէր. մտրակելով նրանց բացասական կողմերը, նա զգում էր իր հոգու խորքում մի բարոյական խրախուսանք։

Այդ օրը նա մի փոքրիկ խնջոյք ունէր. հրաւիրել էր իր ընկերներին՝ վերջին հրաժեշտը տալու։

Ընկերները վաղուց հաւաքուել էին և լցուել Արմէնի փոքրիկ սենեակը։ Երկու սեղան կար դրուած թղթախաղի համար, որոնց շուրջը նստոտած էին երիտասարդ ուսանողները։ Հիւրասիրողները կանգնած այնպէս լարուած նայում էին նրանց խաղին, որ կարծես ուր որ է ահա մի հրաշք պիտի կատարուի։ Երկու խումբն էլ խաղում էր համարեա տենդային դրութեան մէջ։ Միայն առաջին խումբը աւելի աղմկալի, աւելի զուարճալի էր, որովհետև այնտեղ թագաւորում էր տաքարիւն ու զուարճախօս Կոստեան, որ միշտ անհանգիստ կերպով նստում ու կանգնում էր. մանաւանդ հետաքրքիր էր նա այն ժամանակ, երբ թղթեր բաժանելու հերթը հասնում էր նրան։

—Բռավօ, Կոստեա, բռավօ, լսուեց առաջին խմբի հետաքրքրուողներից։

Այդ «բռավօ»-ները զայրացնում էին տարուողներին և շարժում նրանց ինքնա-

սիրութիւնը։ Կոստեան շարունակ տանում էր։

Կոստեան ամեն տեղ յաջողութիւն ունէր, մանաւանդ կանանց շրջանում։ Դէմքը գեղատեսիլ էր, հագուստը այնքան մաքուր, նեղ և օծուած զանազան անուշա-

հոտութիւններով, ինչպէս մի պճնասէր կին։ Նա շատ անգամ իրան անուանում էր «գեղեցիկ սեռի ձկնորս»։ «Ես իղուր տեղը, ասում էր նա, ուռկանս բաց չեմ թողնիլ ձեռքիցս. շատ անգամ որսն իր կամքով է ընկնում ցանցիս մէջ։ Այդ ինձ համար մի զուարճալիք է։ Հայրենիքից դուրս ես աւելի շուտ իւրացրի այս արհեստը, քան պրոֆէսորներիս դասախօսութիւնները»։ Նա սուր յիշողութեան տէր, հրաշալի ֆրազեօր և սրախօս էր։ Սիրել էր նա լոգիկան, բայց սոֆեստութիւնն ուսումնասիրել։ Նա կատարում էր կեանքի մէջ Տարտիւֆի և Դոն-Ժուանի դերը մեծ վարպետութեամբ. իսկ հարկաւոր եղած ժամանակ նա մի յուսահատ Համլէտ էր։ Խաղացողները հետզհետէ տաքանում էին։

Արմէնը մօտենում էր մերթ այս, մերթ այն խմբին, մերթ սեղանի պատրաստութիւնն էր տեսնում՝ օգնելով տանտիրոջ փոքրիկ ծառային։

Մէկը միմիայն նրանցից, լուսամտի մօտ նստած, մտամոլոր դիտում էր երկնքի անհուն տարածութիւնը։ Որքան խորասուզվում էր նա մտածմունքների մէջ, այնքան նրա պատկերը մթագնում, մրոայլվում էր։

Դա Սէգ-Վարդն էր, Արմէնի ամենասիրելի ընկերներից մէկը։ Դա նոյնպէս գրաւիչ էր, որպէս Արմէնը։ Մազերը նոյնպէս գանգուր էին։ Սևորակ աչքերը փայլում էին խելացիական փայլով։ Դէմքը համակրելի էր և խոհուն։ Ընկերները նրան Սէգ-Վարդ էին կանչում, որովհետև նա նման էր սէգ ու խորհրդաւոր վարդի։ Գիմնազիստների մէջ նա բացառութիւն էր կազմում իր բնաւորութեամբ։ Հպարտութիւն, կեղծիք և այլ բաներ նրա համար գոյութիւն չունէին։ Ներողամիտ էր նա և գիտէր ամենի հետ վարուելու եղանակը։ Շատ անգամ նկատվում էր նրա մէջ մի տանջանք, մտորմունք, թերևս նիւթական, սակայն նա չգիտէր իր կարիքները յայտնել ընկերներին, որպէսզի չվշտացնէր, կամ նեղութիւն չտար նրանց։ Սիրում էր խօսել հոգեկան տանջանքների մասին։ Սիրում էր

նոյնպէս պատմել մշակների և նրանց ապարաղդ կեանքի մասին, որով նա շատ էր հետաքրքրվում։ «Երբ բժիշկ կը լինիմ,— ասում էր նա,—ես այդպիսի անբաղդ ու աչքից զցածներին պէտք է բժշկեմ, նրանց համար պէտք է գործեմ»։ Իր դասերը վերջացնելուց յետոյ նա պարապում էր հայերէն և սիրում էր մայրենի լեզուով շարադրութիւններ գրել։ Նրա մէջ հետզհետէ զարգանում էր մայրենի լեզուի քաղցրութիւնը։ Մանաւանդ երբ մի օր, իբրև փորձ, մի պատկեր գրեց՝ «Կարօ» վերնագրով, ու ցոյց տուաւ միքանի հեղինակաւոր անձանց, որոնք ոգևորուելով ասել էին, թէ այդ գրուածքի մէջ երևում է հեղինակի անկասկածելի կայծը, այնուհետև նա գիշեր ու ցերեկ դասերից յետոյ մեծ հաճոյքով պարապում էր գրականութեամբ և նկատում էր թէ ինչպէս ապոլոնեան կայծը հետզհետէ բռնկվում է նրա զգայուն սրտի մէջ։ Բայց նրան աւելի սիրտ ու ոգի ներշնչողը Արմէնն էր։

Յոյսերով ու տենչանքներով լի էր նրա սիրտը, ուստի և դեռ ամեն բանի

վրայ վարդագոյն ակնոցներով էր նայում. կեանքի քուրան դեռ չէր եփել նրան։

Տխուր էր նա։ Արդեօք ինչ էր մտածում։ Յիշում էր իր ծնողները, հայրենիքը, ընկերները, թէ՞ մի ուրիշ բան էր նրա միտքն զբաղեցնողը, այդ դժուար էր գուշակել. սակայն երբ նա մէկ-մէկ նայում էր երիտասարդ խաղամոլներին, նրա դէմքը զզուանք էր արտայայտում։ Երէկ նա վառվռուն յոյսերով բացեց համալսարանի դռները, այսօր բաց է անում կեանքի մի նոր վարագոյր և զարմանում։ Նա կամենում էր միանգամից խանգարել դրանց խաղը և ասել, որ խաղի փոխարէն թող սկսեն խօսել կեանքի, գրականութեան և այլ հարցերի մասին. բայց դրանով միմիայն կը ծիծաղացնէր նրանց։

Նա երեսը դարձրեց դարձեալ դէպի լուսամուտն ու սկսեց դիտել հեռուն։ Այդ ժամանակ մի ձեռք թեթև կերպով ընկաւ նրա ուսի վրայ. նա յետ նայեց։

—Արմէ՞ն,—բացականչեց նա ու իր հերթին ձեռքը դրաւ սրտակցի ուսին։

—Ես եմ, հոգիս. ասա տեսնեմ՝ ինչ էիր մտածում։

—Ե՞ս, շատ բան։

—Գուցէ տխրում ես որ ես գնում եմ, կամ թէ ժամանակ չունինք սիրտներս բանալու միմեանց։ Դեռ վաղ է ընթրիքի նստել. խօսիր, Սէդ-Վարդ, թէև դու յոգնած կը լինիս իբրև ճանապարհորդ։

Սէդ-Վարդը նոր էր եկել հայրենիքից, իսկ Արմէնը վերադառնում էր։ Ժամանակը շատ կարճ էր երկու սրտակիցների համար։ Նրանք խօսում էին քիչ, բայց երկար նայում իրար երեսի։

—Սէդ-Վարդ, որքան փոխուել ես. դու բոլորովին ուրիշ մարդ ես դարձել...

—Իսկ դու, Ա՛րմէն,—ընդհատեց նրան ընկերը,—դու էլ ես փոխուել, և աւելի քան ես։

—Այնպէս յիշում եմ, Սէդ-Վարդ,—ասաց Արմէնը մեծ բաւականութեամբ,—մեր մանկական ու ընկերական կեանքը, որ կարծես այդ երէկ էր, երբ գիմնազիստ էիր. իսկ այժմ—ուսանող։ Յիշում եմ թէ ինչպէս սիրահարուել էիր լատիներէն

լեզուի վրայ և ինչպէս հետաքրքրվում էիր մարդակազմութեամբ, և տեսար թէ ինչպէս լաւ էի գուշակել, որ դու բժշկութիւն ես ընտրելու։

—Կեցցես,—ձայնեց Սէդ-Վարդը չհեռացնելով նրա ուսից իր ձեռքը.—լաւ գուշակեցիր։ Բայց դու գիտես՝ որպիսի դժուարութեամբ գտայ բարերար. կարծեմ գրել եմ քեզ այդ մասին, եթէ միայն ստանում էիր նամակներս։

—Նամակնե՞րդ. այո՛, բոլորը ստանում էի։ Բայց սպասիր, սպասիր, լաւ յիշեցրիր ինձ,—այս ասելով հանեց ծոցից նամակների մի կոյտ։—Յիշո՞ւմ ես փետրվարին գրած նամակդ,—շարունակեց նա արագ-արագ փնտռելով ուզած նամակը.—դու մի անորոշ բան էիր գրել մեր ընկերներից մէկի մասին և այդ բաւական հետաքրքրեց ինձ. առ կարդա,—այս ասելով տուեց նրան նամակը։

Սէդ-Վարդը սկզբում վախեցաւ և լուռ ու մունջ, բայց կասկածանքով լի սկսեց աչքի անցնել գրած նամակը։ Մինչ նա աչքի էր անցնում իր գրած խորհրդա-

ւոր նամակը, Արմէնը հետաքրքրութեամբ նայում էր նրա դէմքին և նկատում թէ ինչպէս հետզհետէ նրա դէմքը քօղարկվում է տխրութեան մռայլ ցանցով և թէ ինչպէս յուզումից դողդոջում էր նամակը նրա ձեռքին։ Երբ ընկերները նայեցին միմեանց, Սէգ-Վարդի աչքերը մերթ առկայծվում էին բարկութեան հրով, մերթ ցաւակցական վշտով։ Նայեցաւ նամակը և երեսը դարձրեց դէպի գիշերուայ անխօս թագուհին, ձեռքերը խաչաձև դնելով կրծքին։

—Սէգ-Վարդ, իզուր ես խուսափում այդ հարցից. դու գիտես որ ես այս գիշեր չեմ կարող քնել, մինչև չլսեմ նամակիդ բովանդակութեան գաղտնիքը։

—Իմ կարծիքով, Ա՛րմէն, խօսել անգամ չարժէ այդ մասին։

—Ո՛չ, ո՛չ, դու անպատճառ պէտք է պատմես...

—Արմէն, Ա՛րմէն, արի՛ տես թէ էլի ի՞նչ մեծ տալիա է ընկել Կոստեային,—լսուեց խաղացողների խմբից։

—Տեսնում ես,—ասաց Սէգ-Վարդը

ուղիղ Արմէնին նայելով, անյարմար է այժմ նոյնիսկ միքանի խօսքով պատմել և այդպիսով փոխել տրամադրութիւնդ։ Ես խոստանում եմ ընթրիքից յետոյ պատմել։

—Բարի՞,—ասաց Արմէնը և գնաց միւս ընկերների մօտ։ Իսկ Սէգ-Վարդը մօտեցաւ մի խմբի, ուր առանձնացած վիճաբանում էին։ Նիւթը Մաքսիմ Գորկին էր։ Խմբի մեծագոյն մասը պաշտպանում էր նրան, նոյնիսկ պաշտում նրա վարդագոյն և նոր իդէաների համար. իսկ միւս մասը անուանում էր նրան «բոսեակների երգիչ», ինչպէս անուանել էր լրագիրներից մէկը, և ասում էր որ նա միայն բոսեակներին է իդէալացնում։

—Բաւական է, պարոններ,—լսուեց նորից Արմէնի ձայնը.—թողէք ձեր խաղն ու վիճաբանութիւնները. կէս գիշերը շուտով վրայ կը հասնի և մեր քէֆը կարող է սահմանափակուել։

—Ո՛չ, ո՛չ,—լսուեցին ձայներ, այս վերջին թուղթն էլ։

—Սպասիր, ահա գալիս է իմ վերջին ռուբլին էլ. բաժանի՛ր թղթերը։

Քանիմի բոպէից յետոյ վեր կացան ամենքը յետ քաշելով աթոռները, որոնց կոշտ ու խղդան ձայներին միացան նրանց աղմուկն ու իրարանցումը։

Նրանք նստեցին ընթրիքի։

Արմէնի շուրջը նստած էին Սէդ-Վարդը, յետոյ ատենախօս ու փաստաբան Սամուէլը, այնուհետև Կոստեան, երգիչ Գարօն, որ բացառութիւն էր իր ընկերների և ուրիշների մէջ։ Կերուխումն սկսուեց։ Միաբերան կամեցան կառավարչութիւնը յանձնել Արմէնին, բայց մերժում ստանալով իրրև տանտէր, միաբերան բուռն ծափահարութեամբ ընտրեցին Սամուէլին։ Առաջին բաժակը նուիրեցին Սամուէլի կառավարչութեան։ Երկրորդ բաժակը՝ պարզ է որ Սամուէլը Արմէնին պէտք է նուիրէր, և երբ նա ոտքի կանգնեց, բոլորի աչքերը դարձան դէպի նա։

—Պարոններ,—դարձաւ ճառախօսը, մենք այսօր հաւաքուած այս տան յարկի տակ, մի սիրտ, մի հոգի դարձած եկել ենք վերջին անգամ, այս քաղցր ուսանողական սեղանի շուրջը հաւաքուած, թափելու մեր սրտից՝ մեր կրծքի տակ թաղնուած ողջ յարգանքն ու պատիւը, սէրն ու անկեղծութիւնը։ Այժմ, սիրելիս,—դիմեց ճառախօսը Արմէնին, մի տխրիր, ուրախացիր որ շուտով տեսնելու ես սիրելիներիդ և հայրենիքդ, որ այնքան սրտմաշուկ «ախ»-երով յիշում էիր միշտ։ Գնա, գործիր հայրենիքիդ և հասարակութեան համար. երբէք չդաւաճանես քո մէջ արմատացած արդար սկզբունքներին։ Դու աւելի շուտ, ինչպէս ինքդ էիր ասում, պատկանում ես խեղճ ծնողների, այժմ էլ պատկանիր խեղճ ժողովրդին, խեղճ հասարակութեան։

—Կեցցէ ժողովրդական գործիչը,—գոչեցին միաբերան ուսանողները՝ թընդացնելով փոքրիկ սենեակը։ Իսկ Արմենը համեստօրէն նշան արաւ որ չչափազանցեն, խօսողը շարունակեց.

—Թող չվհատեցնեն քեզ մարդկանց նողկալի, անհիւրընկալ սրտերը, նրանց քինալից ու նախանձայոյզ մեքենայութիւնները, որ կը լարուեն քո դէմ։

3372
28-44

Ցանկանում ենք քեզ աւելի եռանդ ու տոկունութիւն՝ դիմադրելու բոլոր խոչընդոտներին։ Թող փակուեն քո առաջ սալոնական դռները, բայց ոչինչ, քո հանգիստը անշուշտ գտնելու ես թշուառների մէջ։ Ցանկանում ենք որ բոլորիս մաղթանքները՝ ի մի խառնուած զօրեղացնեն քո սիրտն ու հոգին. ցանկանում ենք քո սիրած ու փայփայած գաղափարների իրականացումն,—վերջացրեց իր ճառը ու մինչև յատակը պարպեց կարմիր գինու բաժակը։

Այնուհետև համառօտ ու զգացուած ճառախօսեց Սէդ-Վարդը, յետոյ երգիչ Գարօն երգեց մի տխուր երգ, որ բոպէապէս փոխեց բոլորի տրամադրութիւնը։ Ամենից վերջը բաժակը ձեռքին ոտքի ելաւ Արմէնը, բայց չգիտէր թէ իր բուռն զգացմունքները ինչպէս յայտնէր։

—Անգին ընկերներ, չգիտեմ արդեօք երդ է ինձ համար թէ իրականութիւն, չգիտեմ ինչպէս արտայայտեմ ողջ զգացմունքներս ու բերկրանքս։ Ես բնաւ արժանի չէի այն բառերին, որ շռայլեցիք ինձ համար, այն բարձրութեան, որտ ասցրիք ինձ։ Միայն ես ջանք կ'անեմ, որ ձեր խօսքերը դատարկ չընկնեն։ Սիրելի ընկերներ, ինչ որ ցանկացաք ինձ, փոխադարձաբար ցանկանում եմ ձեզ։ Անկեղծ շնորհակալութիւնս։

Վերջացնելով խօսքը, գինու բաժակը մօտեցրեց շրթունքներին և նստեց տեղը։ Այդ գաղափարական խօսքերը, որ ասուեցան այդտեղ, որպէս խառնաձայնութիւն ծակում էին Կոստեայի ականջները, մանաւանդ երբ այդ բոպէին յիշում էր իր Փէնիչկային։

—Կոստեա,—դիմեց ինտրիգանտ Սիսակը խաւիարը քսելով հացին,—ականջներդ լաւ բաց արա. այսքան քարոզները երևի մի ականջովդ լսում ես, միւսով թողնում։

Ընկերները քահ-քահ ծիծաղեցին, կարծես կամենալով շարժել Կոստեայի ինքնասիրութիւնը։ Արմէնը չծիծաղեց, այլ միայն ժպտաց։ Կոստեայի աչքերը վառուեցան բարկութեան և արհամարհանքի հրով։

—Ողորմելի մարդ,—ասաց նա, դեռ

քո աչքի գերանը հանիր, յետոյ ընկերոջդ աչքի չիւղը տես։

—Լաւ է դիմանում ես տեղդ նըստած, առանց Ֆէնիչկայիդ, գրգռեց նոցից խորամանկ Սիսակը։

Սեղանը կենդանութիւն ստացաւ։ Ուտում, խմում էին և ալկոհոլը կամաց-կամաց անում էր իր ազդեցութիւնը։ Շատ ճառեր խօսեցին, շատ վիճաբանութիւններ եղան, շատ թեմաներ շօշափեցին։ Մանաւանդ «Արմէնական հարցը»։ Այդպէս էին կնքել նրա անունը իր հայեացքների համար։ Նա ասում էր, որ պէտք է արհամարհել կանանց ժպտալից ու սիրանենդ հայեացքները, երբ նրանց մէջ տուփանք է նկատվում, քանի որ դրանով կործանում են թէ իրանց ապագան և թէ շատերի։ Նա ասում էր՝ եթէ կան աշխարհիս երեսին անբարոյական կանանց անթիւ լեգէոններ, ապա այդպիսի կանայք նորաստեղծվում են մարդկանցից. այդպիսի կանայք ոչ այլ ինչ են, բայց եթէ մարդկանց անասնական զգացմունքների նողկալի պտուղը, նրանց

անցողական տուփանքի հեշտասիրութեան ու կրքերի արգասիքը։ Սիրել կնոջը իդէալական սիրով, նշանակում է պատրաստել ապագայ լաւ մարդկութիւն. որովհետև կինը իրօք այնպիսի մի իդէալ էր, որին պիտի հասնել միմիայն բարոյական և մաքուր ձգտումներով։

Ահա այն իդէալները, որոնցով տոգորուած էր երիտասարդ Արմէնը։

—Պարոններ, գոչեց Կոստեան տեղից վերկենալով,—թողէք այդ իդէալական-միդէալական մտքերը. կինը ոչ այս է, ոչ այն, այլ այն է՝ ինչ որ մենք։ Եթէ այդ ճիշտ է, թող ուրեմն նա լինի հասարակական... Նրա զգացմունքներին ու կրքերին կապանք չպէտք է դնել. եթէ ուզում էք այդպէս անել, այն ժամանակ թող կանայք էլ փոխադարձաբար մեզ կապանք դնեն. եթէ չեն կարող, թող նրանք անեն այն, ինչ որ մենք ենք անում...

Սկսուեց երկար ու տաք վիճաբանութիւն։

—Պարոններ,—գոռաց յանկարծ Սիսակը, մի մեծ գիւտ արածի նման,—

ես այսքանը կ'ասեմ և կը պնդեմ՝ «Հաւատացիր նաւակդ ալիքին, բայց ոչ գեղեցկուհիների սրտին. ալիքն այնքան նենգաւոր չէ որպէս կինը»։

—Ողորմելի՜ մարդ, ձայնեց Կոստեան տեղից վեր կենալով և աջ ձեռքի մատները բաց անելով նրա դիմաց. նախ՝ այդ դու չես պնդում, այլ Ցիցերոնը, գոնէ յիշիր հեղինակի անունը. երկրորդ՝ մեր հարցին չէր վերաբերում այդ։

—Էքստրա, Կոստեայի կենացը, տնօրինեց կառավարիչը։

Նրանք խմեցին. սեղանը էլ աւելի կենդանութիւն ստացաւ։

Այսպէս նրանք ուրախ անցկացրին այդ երեկոն, որ անջնջելի պիտի մնար իւրաքանչիւրի յիշողութեան մէջ։ Ժամը մօտ երեքն էր, երբ նրանք վերկացան, համբուրուեցին Արմէնի հետ և Բաքոսի տրամադրութեան տակ դուրս գնացին ասելով, որ վաղը կը գան կայարան և այնտեղ կը տան վերջին հրաժեշտը։ Սէգ-Վարդը մնաց նրա մօտ։ Քանիմի ընպէից յետոյ Սէգ-Վարդն ու Արմէնը նայ-

ում էին լուսամտից և լսում թէ ինչպէս բարձրաձայն խօսելով գնում էին՝ միքանիսը դէպի աջ, միւսները ձախ, միքանիսն էլ կառքի մէջ նստեցին փողոցների անունները տալով...

Ձայները դադարեցին, ընկերները անյայտացան մթութեան մէջ։ Նրանք թողին լուսամուտն ու սկսեցին անցուդարձ անել սենեակի մէջ։

—Սէգ-Վարդ,—դիմեց Արմէնը ընկերոջը, նստելով աթոռին.—ինչպէս դուր եկաւ քեզ մեր շրջանը։

—Շրջանը, — ճրճռան ճառեր, խոստումներ, յոյսեր, վարդագոյն երազներ, որքան կ'ուզես. իսկ գործ, գործ, Արմէն non multa, sed multum*), ասաց Սէգ-Վարդը, կանգնելով նրա դիմաց և ձեռքերը դնելով գրպանը։

Արմէնը ժպտաց, իսկ Սէգ-Վարդը հասկացաւ նրան։

—Նստիր, հոգիս, ասաց Արմէնը մի

*) Ոչ շատ խօսք, այլ շատ գործ։

քանի ըսպէից յետոյ. դու ինձ ասա, դարձեալ գրո՞ւմ ես։

—Ա՛խ, Ա՛րմէն, գիտես, այդպիսի ցանկութիւններ երբ մտնում են այսպիսի կրծքի տակ,—ասաց Սէդ-Վարդը ձեռքը ամուր խփելով իր թոյլ կրծքի տախտակին,—նրանք սկսում են մաշել, հալել՝ իսկ այնպէս, ինչպէս մի հիւանդութիւն։ Գիշեր-ցերեկ մտածմունքներս այդ սիրած ու պաշտած առարկան է, և օրէ օր սպասում եմ խելագարուելու չափ այն օրին, երբ կ'աւարտեմ համալսարանը և մի ձեռքիս գրիչ, իսկ միւսում—բժշկութիւն՝ կը մտնեմ ասպարէզ գործելու։ Օ՜, մօտեցիր շուտով, ցանկալի օր։ Սիրելիս, դու այդ երևակայո՞ւմ ես,—իր գրաւիչ աչքերը սևեռելով հարցրեց Արմէնին։

Արմէնը հաւանական և սիրալիր կերպով գլուխը շարժեց, հրճուելով իր ընկերոջ վրայ։

—Սակայն,—շարունակեց նա,—շատ անգամ եմ յուսահատուել, երբ խոչընդոտների եմ հանդիպել, շատ անգամ եմ ուզեցել կոտրել գրիչս, երբ ես ուզեցել եմ

կանացի անհամբերութեամբ ամեն բան միանգամից կլանել, ամեն բան սովորել։

—Սէդ-Վարդ, հազար անգամ ասել եմ, որ երբէք չպէտք է յուսահատուել։ Ի՞նչ էր իմ դրութիւնը, լաւ յիշո՞ւմ ես, և ո՞վ կարող էր հանդուրժել կեանքի այն սոսկալի ալիքներին, երբ ես... վերջապէս թողնենք իմ անցեալը։ Ցիշիր մեծ մարդկանց կեանքը։ Տես, տակտով ընթացքը, համեստութեամբ քայլելը նրանց հասցրին ոլիմպիական բարձրութեան։ Քի՞չ են եղել արդեօք այնպիսի գործիչներ, որոնք հերոսաբար դիմադրել են կեանքի դաժան խոչընդոտներին, արիութեամբ ու ջանասիրութեամբ, կամքի տոկունութեամբ, և որ գլխաւորն է՝ ինքնօգնութեամբ կարողացել են մտնել իրանց պաշտած ասպարէզը։ Մի յուսահատուիր, յուսահատութիւնը տանում է դէպի անկումն։

—Ախ, Ա՛րմէն, ո՜րքան բարի, անկեղծ ես, ո՜րքան...

—Լաւ,—ընդհատեց Արմէնը,—թող այդ հաճոյախօսութիւնները. բայց երանի մեր մէջ շատ Սէդ-Վարդեր լինէին։

Նոյն բառերը կրկնեց Սէգ-Վարդն Արմէնի անունը տալով և երկուսն էլ լուռ համբուրեցին միմեանց ճակատը։

Տիրեց լռութիւն։

Արմէնը վեր կացաւ տեղից և մօտենալով լուսամտին, սկսեց նայել հեռուն։ Լուսինն այդ պահին բաւական բարձրացել էր հորիզոնից և իր դուրալի լոյսը չէր անջատել Արմէնի լուսամտից։

Իսկ Սէգ-Վարդը ծխախոտի տուփը հանելով, վերցրեց մի ծխախոտ և իր բարակ ու նուրբ մատներով սկսեց հարթել։ Երբ Արմէնը երեսը դարձրեց ընկերոջը, արդէն Սէգ-Վարդի ծխախոտի ծխի առաջին քուլան օձապտոյտ բարձրանում էր օդի մէջ։

—Սէգ-Վարդ, մօտեցիր լուսամտին, նայիր երկնքին և ցոյց տուր մուսադ. տեսնում ես որպիսի հրաշալի բանաստեղծական դիշեր է։

Սէգ-Վարդը մօտեցաւ դանդաղ քայլերով, կարծես չկամենալով խանգարել խորին լռութիւնը, նայեց երկնքին ու խօսեց.

—Ափսո՜ս, որ ես մի նկարիչ չեմ՝ կամ քո սրտի ուղած մի բանաստեղծ, որ երկնային զարդի հրաշալիքը պատկերացնէի քո աչքի առաջ։ Սակայն այդ բոլորը այնքան մօտ է ինձ, որքան իմ սիրտը, այնքան սիրելի, որքան կեանքը. բայց արտայայտել անզօր է լեզուս։ Հը-մայլ՜չ գիշեր... յուզո՜ղ պատկեր... Հրաշալի՜ լուսին, դո՛ւ, որ կրծքիս տակ մաշող վշտերիս տուել ես սփոփանք, դո՛ւ, որ կեանքի քաղցրութեան ծարաւը լցրել ես այս կրծքի տակ, դո՛ւ, որ շատ անգամ եղել ես վկայ արցունքներիս ու միայնութեան օրերիս, դո՛ւ, որ տեսել ես աշխարհի սկզբից ամեն մի գաղտնիք, դո՛ւ, որ այս ժամիս նայում ես այդպէս խորհրդաւոր լռութեամբ, որպէս մէկը իր սիրեցեալի վրայ, դո՛ւ, որ հրապուրում ես ինձ քո թովչական զօրութեամբ՝ զուարճանալ երկնքի հարսանիքում, խաղալ աստղերի հետ և մոռանալ ամբողջ աշխարհը՝ ձեզ հետ ապրելու համար, թող դէթ մի բոպէ, կամ մի վայրկեան լինէի քեզ մօտ և տեսնէի մարդկանց անողոք ա-

բարքը... Տեսնէի նոյնպէս թէ ինչպէս վշտակիր մարդիկ միայնութեան մէջ թափում են արցունք. թէ ինչպէս հիւանդը իր վերջին շնչում աչքերը սևեռած նայում է երկնքին. թէ ինչպէս անփորձները կուրօրէն ընկնում են ցանցի մէջ. թէ ինչպէս խեղճ ճանապարհորդը կորցրած իր ուղին, շուարած հայցում է երկնից օգնութիւն.. Օ՜, ես բոլորին ձեռքս կը մեկնէի. ես չէի լռիլ, որպէս դու, լուսին, թէկուզ դժողքն էլ ընկնէի: Բայց քո սըրբազան պարտքը ստիպում է քեզ տեսնել ամեն ինչ և լռել... Ա՜խ, անգին ընկեր, թող գէթ մի բոպէ ես լինէի այն հրաշալի գոհարի մօտ և նրա ճառագայթների հետ միասին շրջէի ամեն տեղ, ուր նա կ'երթար, ուր նա կը սպրդէր, ուր նա կը թափառէր...

—Հիանալի է,—նկատեց Արմէնը, լսելով նրա մաքուր դեկլամացիան.—քո մէջ բացի բանաստեղծական կայծից, դերասանական աւիւն էլ է նկատվում:

—In facto? (իրա՞ւ),—ձայնեց Սէգ-Վարդը հեգնանքով. ես ուրախութեամբ

կը լինէի դերասան, եթէ սիրտս այսքան քնքոյշ չլինէր: Թողնենք այդ. բայց կարող եմ քեզ հանգիստ թողնել, արդէն ժամանակ է...

—Ո՛չ, ո՛չ,—ընդհատեց Արմէնը.—դեռ դու պատմելու ես ինձ նամակի գաղտնիքը Սարայեանի մասին. կարծեմ չես մոռացել:

Երկու սրտակիցները նստած ու թիկն տուած լուսամտի պատուանդանին, միմեանց երեսին նայելով, սկսեցին «հա», «չէ» անել և ի վերջոյ Սէգ-Վարդը համաձայնեց պատմել:

—Կարիք չկայ երկարաբանելու,—ասաց Արմէնը,—բաւական է միայն գաղափար կազմել նրա մասին: Դէ, Սէգ-Վարդ, սկսիր, պատմիր այժմ ըսմանդ, ասաց նա խոր յոգւոց հանելով ու մատները սանրաձև մտցրեց մազերի մէջ:

—Դէ, լսիր:

Եւ այդ «լսիր» բառի մէջ լսուեց նրա ձայնի չարագուշակ ելևէջը:

II

—Հա, Սարայեանը, ինչպէս քեզ գրել եմ, իրը թէ սիրահարվում է և Վարսիկին կատարեալ սարկացնում իր «սիրոյ» առաջ։ Անցնում է միքանի ամիս. Սարայեանը մուտք է գործում նրանց համեստ յարկի տակ։ Օրիորդի և նրա մօր կասկածներին վերջ տալու համար, Սարայեանը ի նշան իր «անխարդախ սիրոյ» նուիրում է մի նշան և այդպիսով փարատում է նրանց անհանգիստ սրտերը։ Բայց մի երեկոյ՝ այդում զբօսնելիս տեսայ Վարսիկին, որ հեալով փնտռում էր մէկին։ Ահա նա գտաւ վերջապէս Սարայեանին ու սկսեց բորբոքուած խօսել։ Ես ի հարկէ գուշակեցի որ այն սրիկան մի գժնդակ խաղ էր խաղացել նրա գլխին։ Մթութեան մէջ լսեցի հետեւեալը, որ սառսուռ ազդեց ինձ։

III

«Դուք չէք կարմրում, չէք ամաչում արդեօք ձեր լպիրշ վարմունքից, և գէթ մի բոպէ չէք ուզում լսել ձեր խղճի ձայնին։ Ո՞ւր թաղեցիք այն սիրտը, որից բղխում էին իմ առաջ ձեր սիրոյ զեղումները։ Ո՞ւր չորացրիք, ինչո՞ւ պապանձեց այն լեզուն, որով ճառում էիք իմ առաջ սիրոյ քաղցրութեան մասին։ Ինչո՞ւ համար էին ձեր կրքոտ բառերով ու դարձուածներով նկարագրուած սիրոյ երանութիւնները մինչ այն աստիճան, որ մատաղ կուրծքս լցրիք անասնական կրքերով, եռացրիք արիւնս, յափշտակեցիք ինձ և ձեր գիրկն առաք... Ա՜խ, սիրտս մերթ առ մերթ թելադրում էր, որ ինձ ուզում էք անդունդը գլորել... և երբ անջատւում էի ձեր գրկից, երբ անփորձ ուղեղս դատում էր հանգիստ, տուն վերադարձիս սոսկում էի այդ մտքից։ Նոյնիսկ այն բո-

պէին, երբ ինձ սեղմում էիք ձեր կրծքին, ես մտածում էի խեղդամահ անել ձեզ, երբ համբուրում էիք՝ թքել ձեր երեսին ասելով, որ դուք մի հրէշ էք մարդկային կերպարանքով։ Սակայն վերջին օրը դուք ինձ բոլորովին գերեցիք։ Եւ ո՞վ լինէր իմ տեղը որ չկորցնէր ինքնագիտակցութիւնը, այն էլ ինձ նման մի անփորձ աղջիկ։ Դուք ինձ ասում էիք որ հեռու մնամ այժմեան երիտասարդներից, որովհետև նրանք բոլորն էլ սրիկաներ են։ Այժմ այն սրիկան դուք էք, դո՛ւք, անգո՛ւթ և վատաշոտ սիրահար, դո՛ւք, կրքո՛տ և անբարոյական հրէշ... Ա՜խ, դուք ինձ յափտեան գցեցիք կորստեան անդունդը... Չկայ մէջս այնքան ոյժ, որ ձեր եռուն արիւնը սառեցնէի երակներիդ մէջ և մասմաս փրթէի աչքիս առաջ։ Բայց ես, խեղճ ողորմելիս ի՞նչ կարող եմ անել, ոչինչ... Ա՜խ, բաւական չէր որ ամիսներով քաղցեցիք թունալից համբոյրներ ձեր ապականուած կրծքին սեղմած, դո՛ւք, ա՜խ, անիրա՜ւ գիտակցութիւն, դուք կործանեցիք նաև ապագաս, խլեցիք կուսութիւնս...

—Կուսութի՞ւն, օ, անգո՛ւթ մենատոր, —շշնջաց Արմէնը յուզուած ձայնով.—հաւատացի՛ր, Սէդ-Վարդ, որ կսկիծը մա-

շումէ կուրծքս։ Մի ընկնիր առասպելական աշխարհը և իրականից դուրս ինձ ոչինչ մի պատմիր. ես սոսկում եմ։

—Ես կս։ Երդվում եմ, սիրելիս, իմ և քո արևով, որ մեղմում եմ ասածներս։ Օ՜, եթէ հնար լինէր մի առ մի պատմել նրա ամեն արարմունքը, դու ուղղակի կը զարհուրէիր։

—Ափսո՜ս աղջիկ. ես նրան լաւ եմ ճանաչում. ես նրան մի ժամանակ դաս եմ տուել։ Սակայն վերջացրու այդ թշուառ աղջկայ պատմութիւնը։

—Հա. «Այժմ,—շարունակեց խեղճ Վարսիկը արցունքից խեղդուած,—հեռացէք ինձանից, իսկ ես կայծակի արագութեամբ պիտի տարածեմ ձեր վարմունքը, որ ինձ նման անփորձները հեռու մնան ձեզ նման անպիտաններից, իսկ փորձուածները թքեն ձեր անամօթ երեսին»։

—Իսկ Սարայեանը, ցինիկական հեգնանքը երեսին, բարկութիւնից կրծում էր շրթունքները և աչքերից կարծես վրէժխնդրութեան կայծեր էին ցայտում։ Նա ձեռքը թափահարելով սկսեց սպառնալիքներ կարդալ նրան։ Խեղճ աղջիկը էլ չկարողացաւ հանդուրժել այդ սոսկալի բորբոքման և դէմքը ծածկելով իր փոքրիկ ու դողդոջուն ափերով, հեծկլտալով անյայտացաւ մթութեան մէջ։ Միւս օրը լսեցինք, որ թշուառ աղջիկը մահը գերադասելով կեանքից՝ իրան ջուրն էր նետել։

—Ա՜խ, անգութ մենտօր... Եւ քանի՜-քանիսը, սիրելի Սէդ-Վարդ, սարսափելի պարաղիտի նման ծծում են մատաղ սրտերը... քանիսի՜ թշուառութեան պատճառ դառնում։ Ա՜խ, անսկզբունք, մաքուր իդէալից զուրկ երիտասարդներ...

Այդ ասելով, Արմէնը իր գանգրահեր գլուխը դրաւ Սէդ-Վարդի ուսին, իսկ վերջինը գրկեց ընկերոջ։

Ծանր ու խոր լռութեան մէջ ներդաշնակ կերպով լսւում էր երկու սրտակիցների շնչառութիւնը։

—Այժմ,—ասաց Սէդ-Վարդը երկար լռութիւնից յետոյ,—ժամանակ է գնալու. դու մոռացիր ամեն ինչ և հանգիստ քնիր։

Երկու սրտակիցները վեր կացան և համբուրուեցին։

Սէդ-Վարդը գնաց, իսկ Արմէնը երկար ժամանակ նայում էր նրա ետևից։

IV

Արմէնը չկարողացաւ իսկոյն քնել և խորասուզուած մտքերի մէջ սկսեց անցուդարձ անել սենեակում։ Նա նայեց ընթրիքի անկանոն սեղանին, գինու դատարկ շշերին, ցրուած ափսէներին ու աթոռներին, յետոյ մօտեցաւ լուսամտին ու սկսեց դիտել հեռուն, ուր աստղերի նման փայլում էին ելէքտրական լուսաւորութիւնները։ Լուսնի ճառագայթների տակ աղօտ կերպով երևում էր միայն բարձր ու ցածր տանիքներ, որոնց սահմանը կորչում էր մթութեան մէջ։ Նա նայում էր շարունակ. նրա աչքի առաջ արագ-արագ փոխվում էին պատկերները։ Ցիշողութիւնները յաջորդում էին մէկը միւսին։ Թվում էր նրան, որ իր ամբողջ կեանքն անցնում էր իր աչքի առաջից։

Ահա ցոլաց նրա յիշողութեան մէջ

իր չարաճճի և վառվռուն մանկական կեանքը։ Ցիշեց աշակերտական օրերը. այնուհետև տարիները գլորուեցին մէկը միւսի ետևից և երևան եկան պատանեկան տարիները՝ լի յոյսերով, ծրագիրներով ու սխալներով. յետոյ երիտասարդական, ուսանողական կեանքը իր բոլոր առաջադիմութեամբ, հսկայական քայլերով ու ջանասիրութեամբ։ Այսօր նա այդ բոլորին տալիս է վերջին բարևը։ Թողնում է աշակերտական նստարանը, ուսանողական կեանքը և ինչպէս անփոյթ նաւաստի ընկնում է կեանքի ծովը։ Այժմ նա կեանքի աշակերտ պէտք է լինի և իր դասերը կեանքի ամեն մի քայլից ստանայ։ Ցիշեց նա այժմ լատինական ասացուածը՝ „non scholae, sed vitae discimus“ (մենք սովորում ենք կեանքի և ոչ ուսումնարանի համար)։

Արմէնը մտաւ անկողին, բայց դարձեալ քունը չմօտեցաւ նրա աչքերին։ Ցիշեց նա Կոստեայի արարքը, յիշեց Նոյնպէս Սէգ-Վարդի պատմութիւնը։ Մտապատկերները խառնուեցան մէկը միւսի հետ։ Նա փոր-

ձեց հանգիստ տալ իր յոգնած ուղեղին, բայց չեղաւ։ Նորից յիշեց Կոստեայի անբարոյական և քստմնելի կեանքը, Մարյեանի պատկերը և իր ներքին խոսակցութեամբ սկսեց դատափետել, պախարակել նրանց։ Կարծես նա աղաչում էր, որ ձեռք վերցնեն այդպիսի «սիրուց», որ ժամանակ է վերջապէս խնայել քընքոյշ ու անմեղ սրտերին։ Յիշեց նոյնպէս թէ ինչպէս մի օր խայտառակեց Կոստեային՝ նրա հետևեալ հարցի համար.

—Արմէն, ինչպէս է դուր գալիս քեզ,—ասաց Կոստեան, ցոյց տալով մի մանկահասակ օրիորդի վրայ,—աչքերը՝ վառվռուն, սպանիչ, գերող և վերջապէս մանգնիսացնող. դէմքը՝ հրեշտակային, իսկ կո՞ւրծքը... Դէ, ասա, չարժէ արդեօք մի համբոյր քաղել նրանից, նրա վարդ այտերից և գէթ մի բոպէ պահել գրկի մէջ։

—Կոստեա, այդ լրբութիւն է, լռիր։

—Դէ, ճիշտն ասա, Ա՛րմէն. ասենք գիտեմ, երեսանց չես ցոյց տալիս, բայց չէ՞ պատահել քեզ ընկնել այդպիսի երևակայութիւնների մէջ։

—Ո՛չ,—դրականապէս պատասխանեց Արմէնը,—ես այդպէս բաներ մտածելու ժամանակ չունիմ։

—Լաւ, եթէ նա սիրահարուի քեզ վրայ, այն ժամանակ էլ չես համբուրիլ, չես գրկիլ. դէ, ասա, սուտ ճգնաւոր մի՛ ձևանար։

—Օ՜, այդ քստմնելի գայթակղութիւն է... Գիտես, Կոստեա, այդպիսի երեխաների հետ չի կարելի սիրային խաղեր անել. ես ամբողջ էութեամբս հակառակ եմ այդ մտքին։ Շատ անգամ եմ ասել, որ այդ լրբութիւն է։ Եէ՞ որ նա դեռ չէ հասկանում թէ ինչ է սէրը։ Գայթակղեցնել այդպիսիներին, նշանակում է զարգացնել նրանց մէջ անասնական կրքեր, կործանել նրանց ապագան։

—Երանի՞ թէ, Ա՛րմէն, դու ընկնէիր այդ քաղցր կապանքի մէջ և յետոյ խօսէիր։ Դու չես ճաշակել և չգիտես թէ ո՞րքան քաղցր, ո՞րքան արբեցուցիչ է սէրը։ Նրա մէջ և՛ իդէալներ, և՛ պօէզիա, և՛ կեանք, և՛ շունչ, և՛ անոյշ երանութիւն կայ։ Դէ, ասա, եթէ նա քեզ մի համբոյր առա-

ջարկէր իր վարդագոյն շրթունքներից, չէ՞իր...

—Կոստեա, դու ինձ բոլորովին զայրացնում ես. հազար անգամ ասել եմ որ համբույրի փոխարէն կը թքէի։

—Անմիտ երեխայ ես եղել, Ա՛րմէն. հաւատացիր, որ մի անյայտ, կամ մի գերբնական ոգի զրկել է քեզ ամենագեղեցիկ ցանկութիւնից։ Դու ուղղակի անբնական մարդ ես։ Տե՛ս, այն քո կարծեցեալ երեխային, ես նրանից անմահական համբույրներ եմ քաղել, որոնք ա՛յնքան անուշ, ա՛յնքան քաղցր էին, որ այժմ էլ կարծես զգում եմ շրթունքներիս վրայ...

Արմէնը չկարողացաւ տանել այդ և լուտանքների մի ամբողջ հեղեղ թափեց նրա գլխին. թքեց նրա երեսին՝ անուանելով նրան անբարոյական, սրիկայ և շատ ուրիշ ածականներ։ Ահա, այդ օրուանից թէև նա ամեն տեղ մեծ վարպետութեամբ էր կատարում իր գերը, սակայն Արմէնի մօտ չէր համարձակվում խօսել այդ մասին։

Այդ յիշելուց յետոյ, յիշեց ուրիշ շատ

օրինակներ իր ընկերներից, որոնց արարքը Արմէնին մելամաղձոտութեան էին հասցրել։ Մատաղ սերնդի օրինակները հետզհետէ պատկերանում էին նրա աչքի առաջ իրանց գծուծ ու զազրելի գործերով և այդ դառն ճշմարտութեան հուրը՝ միախառնուած արդար բարկութեան հետ խաղում էր նրա խորհրդաւոր ու թախծալի աչքերում։ Նրա աչքի առաջ պատկերանում էր մի ահեղ պատերազմ, որտեղ մարդիկ կռիւ էին մղում կանանց դէմ, և ուր, մի տեղ ներկվում էր կարմիր արիւնով և մարդիկ ընկնում էին կանանց հետ. մի տեղ առանց զէնքի, որպէս մի լուռ սրտմաշուկ մնջկատակութիւն, մարդիկ դարձեալ հալածուած՝ ընկնում էին առանց զէնքի, առանց արիւն թափելու. մի տեղ կանանց խումբը հպարտութեամբ ծածանում է իր յաղթական դրօշակը և հեգնօրէն ծիծաղում տղամարդկանց վրայ, որպէս խեղճ ստրուկների, և՝ ընդհակառակը։ Թվում էր նրան, որ այդ բոլորի պատճառը կոյր սէրն է։ Նա մերթ կանանց թուլամորթու-

թիւնն էր պախարակում, մերթ տղամարդկանց. բայց աւելի շուտ վերջիններին, որոնք բարձր են կանգնած կանանցից իրանց կամքի ոյժով։ Նա զարմանում էր իր վրայ, թէ ինչո՞ւ իրան չեն կարողանում խաբել չքնաղագեղ գերող աչքերը, թէ ինչո՞ւ ինքը չի ընկնում այն պըճնասէր կանանց որոգայթների մէջ, որ այնպէս վարպետութեամբ են ստրկացնում տղամարդկանց, որոնք բանալով իրանց աչքերը, արդէն խղճուկ ստրուկ են տեսնում իրանց։

Նա տեսել էր այդ իրականութեան մէջ, բայց աւելի շատ կարդացել վէպերում սիրոյ անյաղթելիութեան մասին, թէ ինչպէս մարդիկ ստրկանում են սիրոյ առաջ և մի համբոյրի ցանկութիւնից տարվում, շշմում, հիւանդանում, խռովում է իրանց միտքն ու հոգին, յեղաշրջվում ամբողջ նեարդային համակարգութիւնը և նոյնիսկ տենդային դրութեան մէջ չունչները փչում... Նա և՛ արհամարհում, բարկանում էր բոլոր այդ սիրոյ հերոսների ու հերոսուհիների վրայ, և՛ խղճում։

Բարկանում էր, որ նրանք մէկը միւսին գայթակղեցնելով՝ իրար գցում են որոգայթի մէջ. արհամարհում էր, որ նրանք չունին կամքի ոյժ և այնքան ստորացնում են իրանց, որ ծունկ են չոքում ներկայիս Անահիտների առաջ։ Միայն «մի համբոյր», կամ երեք խօսք՝ «սիրում եմ քեզ» և տարվածուներն արդէն հասած են համարում իրանց երջանկութեան զենիթին։

Խղճում էր, երբ տեսնում էր նրանց դրութիւնը։ Զվրիպեց նրա յիշողութիւնից և իր ընկեր Գրիգորը, որ գրանվում էր հայրենիքում, և որ իդէալական սիրով տոգորուած՝ ամուսնացաւ օրիորդ Անուշի հետ։ Գրիգորի և Անուշի մտապատկերներն էլ անցան և երևան եկաւ հակապատկերը՝ Սարայեանի և Կոստեայի պատկերը, և տանջող դիլեման երկար ժամանակ կռիւ էր մղում նրա մէջ...

V



Գեղեցիկ էր առաւօտը։

Ժամացոյցի սլաքը որքան մօտենում էր XI-ին, այնքան կայարանի դահլիճը լցվում էր խուռն բազմութեամբ, այնքան աւելի շատանում էր ժխոռը այդ խառնիճաղանճ մարդկանց խառնուրդի քաօսում։ Դահլիճի արևմտեան մասում դրուած էր մեծ ու երկար սեղան, որի վրայ շարուած էին գեղեցիկ ծաղկամաններ, լամպարներ, շքեղ ճենապակէ պատուանդաններ, որոնց վրայ դրուած ապակէ քառանկիւնի արկղների մէջ լողում էին բանտարկուած ոսկէ ձկնիկները։ Սեղանի մի ծայրին նստած էին մի խումբ ուսանողներ։ Մէկը միայն նրանց մէջ աչքի էր ընկնում։ Նրա փոքրիկ, սև պայուսակը, որ կախուած էր նրա կողքից, ցոյց էր տալիս որ նա է մեկնողը։ Արմէնն էր այդ և նրա շուրջը հաւաքուել էին իր ընկերները։ Սէգ-Վարդը նստած էր Արմէնի կողքին. մի ձեռքով գրկել էր նրա մէջքը, միւսով ոլորում էր իր նորածիլ բեղերը և աչքերը սևեռած իր սրտակցին՝ չէր յագենում։ Երկսեռ բազմութիւնը զբօսնում էր նրանց առաջ և իրանց հետաքրքիր հայեացքները ստէպ-ստէպ դարձնում էին այդ խմբի վրայ։

Արմէնը չէր նկատում, թէ ինչպէս երկու հրաշալի աչքեր դիտում էին իրան։ Նա չէր նկատում, որ իր գրաւիչ պատկերը, խօսակցութեան ձևը կաչկանդել էին այդ աչքերը, թէ ինչպէս սիրուն աչքերը

անհամբերութեամբ սպասում էին փոխադարձ ակնարկների։ Սակայն Արմէնը շարունակում էր խօսել և իւրովի անտարբեր լինել դէպի երկսեռ բաղմութիւնը։

Կոստեան շարունակ նայում էր այս ու այն կողմը, օրիորդներին, գեղեցիկ տիկիններին և հաղար ու մի մտածմունքներով տարվում։ Կնոջ մի ստուերն անգամ տրոփեցնում էր նրա սիրտը։ Նա ագահաբար կլանում էր փափկասունների կրակոտ հայեացքները։ Կոստեան, որի Արգոսեան աչքերից չէր վրիպում անգամ մի փափկասուն, նկատեց մի ճանապարհորդուհու, մի գեղատեսիլ կոյսի պատկեր, որի աչքերը կենդրոնացած էին իրանց խմբին։ Կրկին նայեց և տեսաւ, որ Արմէնն է նրան դրբաւողը։

Օրիորդին շրջապատել էին իր ընկերուհիները, որոնք մերթ խօսում էին հեռը, մերթ երիտասարդներին ուղղում իրանց կախարդիչ ժպիտներն ու ակնարկները։

Արմէնի աչքերը ակամայից ընկան

այն չքնաղ օրիորդի աչքերին, որ վաղուց սպասում էր լուռ պատասխանի։ Նա անտարբերութեամբ երեսն ընկերներին դարձրեց ու սկսեց խօսել. սակայն մի

ներքին զգացում ստիպեց երկրորդ անգամ նայել։ Այս անգամ օրիորդի ակ-

նարկն աւելի խորհրդաւոր էր, աւելի դիւթիչ։

Խորամանկ Կոստեան նկատեց Արմէնի ակնարկը և դառնալով ընկերներին ասաց մեծ բաւականութեամբ.

—Պարոններ, չզարմանաք. հաղիւ հազ մեր Արմէնը զգում է իր սխալը. այդ սըխալը զգալ տուեց ինքը բնութիւնը. հասկանում էք, բնութիւնը։

Բոլորը զարմացած նայեցին նախ Կոստեային և յետոյ Արմէնին, չհասկանալով նրա խօսքերի բուն իմաստը, միայն Արմէնի սիրտը կարծես խոցուեց և դէմքը կորցրեց իր առաջուայ փայլը։

—Ի՞նչ է պատահել, հոգիս,—հարցրեց իսկոյն Սէգ-Վարդը։

—Ո՞վ, ի՞նչ... ում մասին է այդ ակնարկը,—հարցրեց Արմէնը։

—Ոչինչ,—հեգնեց Կոստեան դէմքը անմեղ մարդու պէս ժպտեցնելով, ոչինչ։ Բայց գիտե՞ս, լաւ պատառ է, նոյնիսկ նախանձելի։ Նա էլ երևի նոյն գընացքով է գնում, երևի մի օթեակում կը լինիք։ Այնպէս չէ՞, Ա՛րմէն։

Գաղտնիքը պարզուեց և ամենքը զարմացած, նոյնիսկ ապշած նայեցին Արմէնին, որի դէմքը շուտ-շուտ կարմրինսպիտակին էր տալիս։ Կոստեան դրանով ոչ միայն խոցեց նրա սիրտը, այլև վրէժ լուծեց։

—Պարոններ,—բացականչեց Արմէնը.—նախ՝ չեմ յափշտակուել նրանով. երրորդ՝ եթէ իրօք այդպէս լինէր, նա իրաւունք չունէր այսքան բաղմութեան մէջ...

—Ի սէր Աստուծոյ, Ա՛րմէն,—ընդհատեց Սամէլը, չարժէ իսկ խօսել դրա հետ. մենք նրան էլ, քեզ էլ լաւ ենք ճանաչում։

Նրանք շուտով մոռացնել տուին Կոստեայի քինալից վարմունքը։ Լսուեց երկրորդ զանգը. ընկերները համբուրուեցին Արմէնի հետ։ Ամենից վերջը մօտեցաւ Սէգ-Վարդը։ Նրանք գրկախառնուած երկար ժամանակ համբուրվում էին։

Քանիմի բոպէից յետոյ Արմէնը գլուխը դուրս հանեց օթեակի պատուհանից և ի՞նչ զարմանք, իր կողքի լուսամտից նայում էին նոյն կախարդիչ աչքերը։

Գնացքը շարժուեց։ Մի քանի գլխարկ-

ներ ու ճերմակ թաշկինակներ փողփողացին օդի մէջ։ Արմէնը վերջին անգամ էլ նայեց ընկերներին և լսեց մի զաղրելի ու դառը քրքիջ։

Այդ Կոստիայի քինալից քրքիջն էր, կարծես ասելիս լինել՝ «ողորմելի՜ մարդ, քեզ ևս տեսանք, բարով վայելես»։

VI

Այնտեղ, ուր Արմէնն էր նստած, մի քայլ հեռու նստած էր մագնիսը, այն կախարդիչ, կրակոտ աչքերը, որ յափշտակուած դիտում էին իրան կայարանում, և որ ծաղրանքի առիթ տուեց Կոստեային։

Օրիորդը մօտ քսան տարեկան կը լինէր. նուրբ իրանով, սև ու երկար մազերով, հրեշտակային դէմքով, սպիտակ ու միքիչ կարմիր այտերով, բարակ շրթունքներով, մի չքնաղ արարած էր։ Սիրահարուած էր նա մի ոմն գիւղատնտես Միքայէլ Սմբատեանի վրայ, որ սրտատրոփ սպասում էր իր սիրեցեալի վերադառնալուն։ Նրանք շուտով ամուսնանալու էին և երկուսով գործելու N. գիւղում։

Օրիորդն անհանգիստ կերպով այս ու այն կողմն էր նայում, կարծես մի բան փնտռելով։ Նա վեր կացաւ տեղից, նայեց Արմէնի և միւսների իրեղէններին և անբաւական դէմքով դարձեալ նստեց, նորից վեր կացաւ...

—Օրիորդ, ի՞նչ էք որոնում,—հարցրեց Արմէնը հետաքրքրութեամբ, երևի ձեր ճամբարկը։

—Այո՛,—պատասխանեց օրիորդը.—գիտէ՞ք պարոն, մի անգամ մի պայուսակ կորցրի, այժմ կասկածում եմ... ահա՛,—բացականչեց նա հազիւ լսելի ձայնով, տեսէ՛ք, անպիտանները որտեղ են դրել։

Օրիորդը հանգիստ նստեց իր տեղը։ Մի փոքր խօսակցութիւնից յետոյ դիմեց նրան Արմէնը, ձեռքը մեկնելով.

—Ներեցէք անծանօթիս, ո՞ւմ հետ արդեօք պատիւ ունեմ խօսելու։

—Շատ ուրախ եմ. Երանեակ Արուեան,—վրայ բերաւ օրիորդը և իր ձեռ-

քի մէջ զգաց մի սառը հոսանք. իսկ ես՝ երևի մի ուսանողի։

—Արմէն Միրոնեան. դուք չսխալուեցիք, օրիորդ. ես նոր եմ աւարտել և այժմ գնում եմ հայրենիք։

Մի փոքր խօսակցութիւնից յետոյ օրիորդը աչքերը գետին գցելով, բռնեց կողքը ու թեթև կերպով «ախ» քաշեց։

—Ի՞նչ պատահեց, օրիորդ,—հարցրեց Արմէնը գլուխը թեքելով.—ի՞նչ կայ, չլինի թէ...

—Ո՛չինչ,—ասաց օրիորդը մեղմագին, կարծես կամենալով թափանցել նրա աչքերի մէջ։

—Բայց ասացէք, օրիորդ, մի՞թէ այդքան խիստ էր ցաւը,—հարցրեց Արմէնը ցաւակցութեամբ։

—Ո՛չ... քիչ առաջ չգիտեմ ինչու գլուխս սաստիկ ցաւում էր. իսկ այժմ կողքս ծակեց, երևի մրսել եմ։

Այս ասելով նրա աչքերում կարդացուեց գլխացաւի գաղտնիքը։

«Առհասարակ,—ասաց իր մտքում Արմէնը,—կնոջ սէրը շատ անգամ գլխացաւով է սկսվում»։

Տխրութեան մռայլը քողարկեց օրիորդ Երանեակի դէմքը։

«Չէ՞, այստեղ մի գաղտնիք կայ, որ ես չգնահատեմ. չէ՞ որ բոլոր կանանց բնաւորութիւնը միատեսակ չէ։ Անշուշտ սրա մէջ մի պարագիտ կայ, որից տանջվում է, մտածեց ինքն իրան Արմէնը։»

Օրիորդը տխրեց, շարժելով Արմէնի կարեկցութիւնը. իսկ կարեկցութիւնը սիրոյ նախերգանքն է։ Նա նկատեց, որ Արմէնը սիրում է տխուր մարդկանց, որ իր թախծութիւնը և թէ ինչպէս խորհրդաւոր «ախ»-ը շարժեց Արմէնին։

Նրանք խօսում էին մտերմութեամբ, նոյնիսկ ծանօթացնելով միմեանց իրանց կենսագրութիւնների հետ։

Կայարաններում նրանք իջնում էին միասին, մի փոքր ազատ շունչ քաշում և նորից փակվում օթեակում։

Գիշեր էր։ Ցոգնած ուղևորները ամենքն էլ ննջել էին։ Ննջում էր և Արմէնը։ Երանեակը լսում էր Արմէնի կանո-

նաւոր շնչառութիւնը։ Օրիորդի կուրծքը արագ-արագ մերթ բարձրանում, մերթ ցածանում էր ալիքների նման։ Նա անթարթ աչքերով նայում էր քնածին, որ կարծես էլեքտրականացած այդ հայեացքից աչքերը բաց արաւ, բայց նորից քաղցր քնի մէջ ընկաւ... Օրիորդը բաց աչքերով թափառում էր երևակայական աշխարհում։

Միւս առաւօտ նրանք իջան N... լեռնանը։

VII

—Բարի եղէք, միւսիւ Արմէն, ինձ մենակ մի՛ թողնիլ, ես վախենում եմ...

--Օրիորդ,—ասաց Արմէնը, պարտքս լինի մինչև հայրենիք չբաժանուել ձեզանից և ողջ ու առողջ ձեզ տուն հասցնել։ Երանեակի աչքերը փայլեցին բաւականութիւնից։

Կայարանում լսեցին, որ ճանապարհ-

ները փչացել են, գնացքը կանգ է առնելու և միայն վաղը առաւօտեան կը շարունակի իր ուղին։

Այդ լուրը Արմէնին տխրեցրեց, իսկ օրիորդը իր հոգու խորքում խնդաց, որովհետև Արմէնի հետ մի ամբողջ օր ունէր խօսելու և զուարճանալու։

Նրանք վարձեցին սենեակներից մէկը։

Սենեակի յատակին փռուած էր պարսկական գեղեցիկ գորգ։ Մի անկիւնում փոքրիկ կօմոդ, լուսացարան, մէջտեղը մի կլոր սեղան, վրան դրած ճենապակէ լամպարը, կարմիր լուսամփոփով։ Շուրջը շարուած բազկաթոռներ. իսկ միւս անկիւնում դրուած էր մի մահճակալ, ծաղկեայ վերմակը փռած վրան ու փափուկ բարձեր դրած։ Մահճակալը երկու կողմից վարագուրուած էր երկար քողով, որ վրանի տեսք էր տալիս։

—Նստեցէք,—առաջարկեց օրիորդը, հանդստանանք մի փոքր, բաւական տանջուեցինք ճանապարհին։

—Օրիորդ, աւելի լաւ է ես ձեզ մե-

նակ թողնեմ. այժմ բոլորովին ապահով եղէք, կարող էք հանգստանալ։

—Ո՛չ,—ասաց Երանեակը, դուք խոստացել էք ինձ մենակ չթողնել։ Մնացէք, շուտով թէյ կը բերեն, խմենք, կաղդուրենք մեր յոգնած ոյժերը։ Դուք ոչ մի բանի մասին չմտածէք, դուք իմ հիւրն էք։

—Դուք պարտաւորեցնում էք ինձ, օրիորդ, ես պատրաստ եմ,—համաձայնուեց Արնէնը։

Նրանք նստեցին սեղանի մօտ, միմիանց հանդէպ։ Այժմ շատ մօտ էին երիտասարդ սրտերը։ Երանեակի գեղեցկութիւնը հետզհետէ շլացնում էր Արմէնին։ Նրա երկայն մազերը, սպիտակ ու փափուկ ձեռները, լիքը կուրծքը, գրաւիչ ու հրեշտակային դէմքը, նրա խօսակցական հայեացքը մագնիսացնում էին Արմէնին։ Օ, ինչ հրաշալի արարած ես դու, ինչ մի գերբնական զօրութիւն կայ քո մէջ, որ կարողանում ես թուլացնել, կակղացնել Արմէնի սիրտը։

Այդ յաւերժահարսի մի ակնարկը բաւական է երիտասարդին իշխելու համար։

Ակնարկ. ահա այն ազդու միջոցներից մէկը, որով զինվում են կանանց մեծագոյն

մասը. մի ակնարկ, որ գերում է շատերին բոպէապէս...

Արմէնը դարձեալ սկսում էր սառչիլ, բայց երբ զգում էր նրա քաղցր մօտի-

կութիւնը, այն երանութիւնը, որ կարծես բուրում էր նրանից, նորից ուզում էր նայել, նայել ու հիանալ, նոյնիսկ սիրել։

Նրանք բաւական խօսեցին։ Ամեն մէկը իր կեանքի բեկորներից պատմելով, բաւական հասկացան միմեանց։

Երանեակը մի շատ համակրելի օրիորդ էր, որ և շատ դուր եկաւ Արմէնին։ Նա ասաց որ ինքը վճռել է գործել գիւղում։ Այնտեղ մեծ ասպարեզ կարող է գտնել։ Նա կը կրթէ գիւղացոց երեխաներին, կը զարգացնէ նրանց մէջ մայրենի լեզուի քաղցրութիւնը, կը քարոզէ նրանց մարդասիրական գաղափարներ...

Արմէնը բերկրանքով լի լսում էր նրան յափշտակուած և նրա ամեն մի բառը մարգարիտների նման շարվում էին նրա սրտի խորքում։ «Կասկած չի կարող լինել,—ասաց մտքում Արմէնը, որ սա գաղափարական օրիորդ է և ես ուրիշ կարծիք չեմ կարող ունենալ»։

Երանեակը իր կեանքից շատ բան պատմեց առանց կեղծելու ու չափազան-

ցելու. միայն մի բան գաղտնի պահեց, այն, որ ինքը նշանուած է Սմբատեանի հետ, որի վրայ ինքը մինչև հիմա էլ սիրահարուած է և նրա պատճառով գնում է գիւղում գործելու։ Այդ ծածկեց, թերևս նրա համար որ այժմ հրապուրուել էր Արմէնով։ Եւ կանանց այդ թոյլ ու անհաստատ բնաւորութիւնն է, որի համար այնքան ընկած են տղամարդկանց աչքում։

—Միւսիւ Արմէն, մենք բաւական հասկացանք միմեանց. այժմ մի հարց. բայց չնեղանաք, համարեցէք թէ ձեզ հետ խօսում է մի անյայտ ոգի։ Դուք դեռ չէք սիրահարուել, այժմ սիրահարուած չէք...։ Եթէ դուք ուսանող էիք, ապա շատ բան արած կը լինէք չէ... Դէ, ասացէք, ո՞վ է ձեր...

Արմէնը մի փոքր մտածելուց յետոյ ասաց.

—Քոյրիկ, ինչ կարիք կայ այդպիսի հարց առաջարկելու։

«Քոյրիկ» բառը կարծես ծակեց Երանեակի ականջները։ «Դուք սխալվում էք,—

ասաց նա իր մտքում, ես ձեր քոյրը չեմ կարող լինել, այլ ձեր սիրեցեալ Երանեակը»: Նա կամենում էր այդ բառերը բարձր ասել, բայց իրան զսպեց: Հարցը շուտով փոխուեց և նրանք խօսում էին զանազան հեղինակների մասին: Թէյ խմելուց յետոյ նրանք դուրս եկան զբօսնելու և մի փոքր ճեմելով ընութեան ծոցում, վերադարձան սենեակ: Արդէն ժամանակն էր: Իսկոյն պատրաստել տուին ճաշը և ուրախ տրամադրութեան տակ ճաշեցին:

—Այժմ,—ասաց Արմէնը տեղից վեր կենալով, ես կը թողնեմ ձեզ: Դուք մի փոքր հանգստացէք, իսկ ես կ'երթամ այնտեղ, ընութեան ծոցում հանգստանալու:

Արմէնը դուրս գնաց: Երանեակը մօտեցաւ լուսամտին և սկսեց նայել, թէ ինչպէս Արմէնը ձեռնափայտը ձեռքում խաղացնելով գնում էր ծառուղիների միջով դէպի տնտառի խորքը: Միքիչ յետոյ Երանեակը թողեց լուսամուտը և գլխակոր սկսեց անցուդարձ անել սենեակի մէջ և մի փոքր յետոյ պառկեց հանգըս-

տանալու: «Զարմանալի երիտասարդ,— մտածում էր նա անկողնում... Բայց դուցէ ինձ արժանի չէ գտնում իր սիրոյն: Եթէ իրօք այդպէս է, ապա ես ինչու՞ եմ խելագարվում նրա համար. մի՞թէ յիմարութիւն չէ իմ կողմից...

VIII

Երանեակը մի փոքր քնելուց յետոյ, վեր կացաւ, լուացուեց ու դուռը փակելով դուրս եկաւ սենեակից:

Նա գնում էր այն ծառուղիների միջով, որ կողմը գնացել էր Արմէնը:

Միքանի բոպէ գնալուց յետոյ տեսաւ Արմէնին թփերի մօտ, ստուերախիտ ծառերի տակ պառկած: Նա դեռ քնած է: Օ՜, ի՜նչ բանաստեղծական տեղ է նա քնած: Կարծես բնութիւնը դիտմամբ հիւսել էր այդ խրճիթը սիրահարուածների համար:

—Ահա այս խրճիթում պիտի հանդչիմ

ես վերջապէս,—ասաց նա և բոլորովին մօտենալով նստեց նրա մօտ։ Ի՞նչ անէր այժմ։ Գրկէ՞ր, համբուրէ՞ր, իսկ եթէ իմանայ Արմէնը և զարթնէ, եթէ համբոյրի փոխարէն թքի երեսին... կարո՞ղ է անել,—մտածում էր այդ բորբոքուած անտառային ֆէան. ո՞ր երիտասարդն է վարվում այդպէս, ո՛չ ոք։ Բայց սա հակառակ է իմ զգացմունքներին։ Ի՞նչ արած... էհ, ինչ ուզում է թող լինի...

Եւ նա առաջ շարժուեց, կամենալով գլուխը մօտեցնել նրան, սակայն յետ քաշուեց։

Վախը, ամօթխածութիւնն ու կիրքը կռիւ էին մղում նրա բորբոքուած կրծքի տակ։ Նա չգիտէր ո՞ր ձայնին լսէ։ Սակայն լինելով թոյլ կամքի տէր, կիրքը յաղթող հանդիսացաւ։ Նա չկարողացաւ երկար դիմանալ, այլ մի փոքր մօտեցաւ նրան և այս անգամ սիրտը գողի ու մարդասպանի նման սկսեց տրոփել։ Մի փոքր էլ առաջ և նա արդէն ընկած կը լինէր Արմէնի կրծքին։ Նա դողում էր ամբողջ մարմնով, որպէս մի տերև քամու առաջ,

կամ մի եղևնի փոթորկի ժամին։ Էլի մի փոքր, և Արմէնը կզդայ իր կրծքի վրայ մի փափուկ ծանրութիւն։ Նա կրքից վառուած գլուխը թեթև կերպով դրեց նրա կրծքին, միքանի րոպէ այդ դրութեան մէջ մնաց։ Արմէնը շարժուեց, Երանեակը վայրկենապէս յետ քաշուեց դողդողալով և միքանի քայլ հեռու նստեց նրանից։

Արմէնը զարթնելուն պէս իսկոյն տեսաւ Երանեակին, որի դէմքը գունատուած էր և աչքերը տամկացած։

—Օրիորդ,—հարցրեց նա իսկոյն,—դուք այստե՞ղ. սակայն ինչո՞ւ դուք այդպէս գունաթափ էք, ինչ կայ, ո՞ւմից վախեցաք...

—Ոչինչ,—ընդհատեց օրիորդը դողդողուն շրթունքներով, ես այնպէս եկայ... մենակ էի, ճանապարհին քիչ վախեցայ... եկայ ձեզ մօտ... հանգի՞ստ էիք քնած...

—Օ՜ դեռ բնութեան ծոցում այսպիսի քաղցր քուն չէի վայելել։

—Այդ նրանից է,—ասաց Երանեակը սիրտ առնելով, որ ես հսկում էի ձեզ վրայ։

—Ո՛րքան բարի էք, քոյրիկ, դուք ինձ պարտաւորեցնում էք։

Երանեակը մի անհանգիստ շարժում գործեց իր տեղում։ դարձեալ «քոյրիկ», —կրկնեց իր մտքում, «բայց չէ՞ որ...

—Միւսիւ Արմէն, խնդրեմ դուք ինձ «Երանեակ» կանչեցէք, այդպէս եմ սիրում լսել։

Արմէնը ոչինչ չպատասխանեց և գլուխը խոնարհելով խորասուզուեց մտածմունքների մէջ։ «Երանեակ», արդեօք ինչ է ուզում ասել. ինչո՞ւ է անախորժ թվում «քոյրիկ» բառը...

«Երանեակ», մտքի մէջ արտասանեց Արմէնը և դարձեալ ընկաւ մտքերի ծովը։

«Ո՛չ, ո՛չ քոյրիկ կ'ասեմ. եթէ ես նրան ասեմ Երանեակ. քիչ յետոյ երևի «Երանեակս» կ'ասեմ։

—Քոյրիկ, ինչո՞ւ էք տխուր, խօսեցէք։

Զքնաղագեղ կուրծքը արագացրեց իր բարախումը։

—Անցնենք, մի փոքր զբօսնենք,—ասաց Արմէնը, իբր թէ հանգստանալով, սակայն նրա մէջ կարծես ներքին կռիւ կար։

Նրանք վերկացան, գնացին դէպի անտառի խորքը, հրճուելով բարձրաբերձ սարերով, խիտ ծառերով ու քչքչան առուներով։

Բաւական զբօսնեցին և մութն էր արդէն որ ուրախ տրմադրութեամբ վերադարձան սենեակ։

IX

Արմէնն ու Երանակը նստած սեղանի մօտ քաղցը խօսակցում էին։

—Վերջապէս շուտով հայրենիք կը հասնենք, օրիորդ։

—Դուք, ուրախ էք,—հարցրեց Երանեակը գողտրիկ գլուխը թեքելով։

—Անսահման։

—Իսկ ես. ոչ։ Ես ուրախ չեմ, որովհետև էլ ով է կարող տեսնել այսպիսի միայնութիւն, այսպիսի բնութեան մէջ։ Տեսէք,—ասաց նա ցոյց տալով բաց լուսամտից լիալուսինը, աստղազարդ երկինքը, լուսնի լոյսով շաղախուած ծառերն ու քչքչան ջրերը... Այս բոլորից զրկուել այնքան էլ հեշտ չէ։ Եթէ ես ձեր տեղը լինէի, միքանի օր ևս կ'ուշանայի. ինչ կայ, եթէ դուք համաձայնուէք... Եւ ով է իմանում, մեր ամբողջ կեանքը հաղիւ թէ մէկ էլ պարգևէ այսպիսի քաղցը օրեր։

—Օրիորդ, ասաց Արմէնը մտերմաբար, երևի դուք սիրում էք բանաստեղծութիւն. բաւական լաւ ֆանտազիօրի ճաշակ ունիք։

—Այո, ասաց օրիորդը, ես միշտ գրում եմ բանաստեղծութիւններ, բայց դեռ չեմ համարձակվում ասպարէզ դուրս գալ. ես դեռ գրում եմ։

—Ա՜, շատ ուրախ եմ, օրիորդ, շատ, ասաց Արմէնը սրտանց ու անկեղծ. գրեցէք օրիորդ, միշտ գրեցէք։ Դուք աւելի վառք և պատիւ կարող էք վայելել գեղարուեստի մէջ։ Ձեր սիրտը ընդունակ է արտայայտել պօէզիան աւելի քնքշօրէն, աւելի անկեղծօրէն։ Դրա համար էլ այ-

սօր անտառում զունաթափ ու մտածմունքներով տարուած էիք, երևի բանաստեղծութիւն էիք ուզում գրել։ Ուրեմն ամեն տեղ բանաստեղծութիւն էք որոնում։

—Մանաւանդ այսօրուան գիշերը իմ գրչիս մեծ զարկ է տալու։ Դուք համաձայն էք այդ մտքի հետ. բանաստեղծական չէ՞ այս գիշերը, նայեցէք։ Մի քանի ամիս չանցած, դուք այս գիշերուան բանաստեղծութիւնը կը կարդաք «Հառաչանքներ» վերնագրով գրքոյկիս մէջ։

—Օրիորդ Երանեակ, ի սրտէ ցանկանում եմ ձեզ յաջողութիւն,—այս ասելով ձեռքը մեկնեց և սեղմեց նրա քնքոյշ ու փափուկ ձեռքը։

Առաջին անգամն էր որ Երանեակը նրա ձեռքը միքանի բոպէ պահեց իր ափում և ամբողջ մարմնով կարծես մի սառը հոսանք անցաւ։

—Վերջապէս դուք նա էք...

Բացականչեց Արմէնը և մնացածը անզօր եղաւ արտայայտելու։ Ուզում էր ասել «դուք նա էք, որին փնտռում էի այս-

քան տարի, որին նուիրելու եմ իմ ամբողջ կեանքս, որին սիրելու եմ իդէալական սիրով, որ պիտի երջանկացնէ ինձ»։

—Ո՞վ,—ընդհատեց Երանեակը,—ո՞վ եմ, ասացէք, մի՞ք տանջիլ ինձ։

Այս ասելով նրա այտերը վարդի պէս կարմրեցին և նայելով Արմէնին իր կրակոտ աչքերով, կարծես ասելիս լինէր. «Չէ՞ որ աչքերս լեզու առած խօսում են, և ձեռքս նոյնպէս, երբ սեղմեցիք, չէ՞ որ ասացին ձեզ՝ «սիրում եմ ձեզ», մի՞թէ դուք այդ չէք հասկանում։

—Օրիորդ,—ասաց նա սառնարիւն ձևացնելով իրան,—ես ասում էի դուք նա էք, որի մասին ասում էին թէ պարապում է գրականութեամբ և բաւական յաջող բանաստեղծութիւններ է գրում։

Երանեակի կասկածները այսպէս մերթ առկայծում, մերթ հանգչում էին։

Արդէն բաւական ուշ էր։ Արմէնը վերկացաւ և վերցրեց գլխարկը։

—Օրիորդ,—ասաց, ես դուցէ ձանձրոյթ եմ պատճառում ձեզ, ժամանակ է գնալու։ Դուք հանգստացէք, որովհետև

վաղը առաւօտեան մեկնելու ենք Աստուծով։

—Ո՛չ, միւսիւ Արմէն, մի՛ք վիրաւորիլ ինձ, դուք բոլորովին չէք ձանձրացնում ինձ, այլ ընդհակառակը։ Մի՛ք գնալ, վաղ է, դեռ խօսենք...։

—Ո՛չ, օրիորդ, ցտեսութիւն, հանդիստ քուն,—ասաց և դուրս գնաց։

Իսկ Երանեակը երկար ժամանակ նայեց նրա ետևից և չշնչաց. «Ի՞նչ արի ես. ինչո՞ւ թողի ես նրան. չէ՞ որ ես մենակ կարող եմ խելագարուել։ Աստուած իմ, ների՛ր ինձ, կարծես ես սրան սիրում եմ... Ո՜րքան գեղեցիկ, ո՜րքան գրաւիչ է... Նա մօտեցաւ մահճակալին և յուզուած երեսն ի վայր ընկաւ։ Ապա մի ձայն թելադրեց նրան յետ կանչել Արմէնին, ասել որ հիւանդ է և վախից չէ կարողանում քընել։—Լա՛ւ,—ասաց նա, ես նրան յետ կը կանչեմ. բայց սիրաս, սիրաս կրծում է մի ինչ որ բան... Հապա նրան, Միքայէլիս ինչ պատասխան տամ։ Չէ՞ որ նա բոպէ առ բոպէ սպասում է ինձ. չէ՞ որ ես նրան խօսք եմ տուել սիրել յաւի-

տեան, անդաւաճան, անխարդախ սիրով, բայց... բայց այժմ, այ՛ժմ,—ոչինչ, իսկ Արմէնը... այո՛ իմս է, ես նրան կը կանչեմ։ Իսկ եթէ գա՛յ... յետո՛յ. յետոյ նրան կ'առաջարկեմ որ այստեղ քնի... բայց յետոյ... ա՜խ...և այդ ասելով երեսը թաղեց փափուկ բարձի մէջ...

Ապա նա դուրս գնաց ու միքանի բոպէից յետոյ ներս մտաւ Արմէնի հետ։

X

—Միւսիւ Արմէն, դուք բոլորովին չէք խղճում ինձ. դուք չէք ուզում մտնել դրութեանս մէջ... Քիչ մնաց խելագարուէի մենակ, ես հիւանդ եմ։

—Մի՛ք յուսահատուիլ, օրիորդ,—հանգստացնում էր նրան Արմէնը, կարեկցաբար բռնելով նրա ձեռքը։

—Ո՜րքան բարի էք։ Եթէ դուք չլինէիք, ես անշուշտ կորած կը լինէի։ Այ-

ժըմ մի փոքր լաւ եմ զգում ինձ... ամ-
որպիսի լաւ գիշեր է...

—Այո,—համաձայնեց Արմէնը։

Նոքա լուռ էին։

Լսվում էր ծառերի խորհրդաւոր սո-
սափիւնը։ Լիալուսինը ամբողջովին շող-
շողում էր, լողալով երկնքի անհուն, ան-
սահման կապուտակութեան մէջ։ Դրսի
զեփիւռը զօրեղացրեց իր ոյժը և վղղա-
լով մտնելով բաց լուսամուտներից, լցրեց
սենեակը. նախ ծածանելով լուսամուտ-
ների վարագոյրները և փոքրիկ լամպարի
լոյսը փղփղելուց յետոյ չքնաղագեղ կոյ-
սի ճակատին թափուած մազերը թեթև
կերպով շարժելով օդի մէջ, դարձեալ
յետ նահանջեց։

—Օ՜, անուշիկ զեփիւռ, դու զոնէ
զովացրու այրուած սիրտս, շշնջաց նա
իր սիրուն խոհական դէմքը դարձնելով
դէպի զեփիւռը։

—Օրիորդ,—ասաց Արմէնը քանիմի
վայրկեան վարանումից յետոյ, ինչ մի
վիշտ, ինչ մի դաւն կսկիծ է արդեօք
ձեզ մաշում. հայրենիքի սէրը, գիտու-

թեան անյագելի ծարաւը, բանաստեղծա-
կան թաղիծը, թէ ժամանակակից երի-
տասարդական հիւանդութիւնը։

Այս ասելով Արմէնը նայեց ուղիղ նը-
րա աչքերին, որոնց մէջ կարդաց իր վեր-
ջին խօսքերի իմաստը։ Այո, նրա աչքե-
րը սէր էին արտայայտում։ Օ՜, որքան
խղճալի էր այդ բոպէին Երանեակը, երբ
իր գողտրիկ գլուխը աջ ուսին թեքելով
նայեց Արմէնին։

Այդ հմայիչ աչքերը, այդ անխօս լե-
զուն, այդ անբարբառ սիրոյ վկան, այդ
մագնիսացնող կայծերը, այդ չնորհալի
պերճախօս աչքերը ինչպէս կենդանի կեր-
պով կարողացան յայտնել իրանց ողջ
մաքերը, իրանց ցանկութիւնները։ Թող
այդ բոպէին պօէտը գիտէր Երանեակի
աչքերը՝ իր թոյլ գրիչը բեղմնաւորելու
համար. թող հոգերանը խորասուզուէր
նրա միստիկական ելևէջների մէջ սիրոյ
գաղտնիքն ուսումնասիրելու. թող սա-
ռած սիրտը, կամ վաղուց դաւաճանու-
ուած յուսահատ սիրահարը նորից գիտէր
այդ աստղերը, և նրա մէջ կ'արթնանար

վաղուց թմրած սէրը. թող հիւանդը մեռնելու ժամին նայէր նրա երկու բոցավառ աչքերին, և կեանքի բուռն նախանձը, ապրելու ցանկութիւնը կըբորբոքէր նրա սիրտը։ Նրա հայեացքը նրա ամեն մի շարժմունքը կարծես լեզու առած խօսում են։ Զգաց այդ Արմէնը և սիրտը, թակարթում բռնուած թռչնակի պէս սկսեց տրոփել։ Արմէնը սիրեց նրան. սիրեց անբիծ ու իդէալական սիրով։ Այդ րոպէին Արմէնի սիրտը տրոփում էր ոչ այնքան նրան գրկելու և կամ համբոյրներով բաւականութիւն տալու իր կրքերին, ոչ, այլ այդ չքնաղ քնքոյշ սիրտը զօրեղացնելու էր նրա սիրտն ու բնաւորութիւնը։

Բայց ուրիշ էր Արմէնի նրբազգաց սիրտը, ուրիշ էր նրա բարոյական զգացմունքները, ուրիշ էին Երանեակինը։ Մէկի մէջ անբիծ ու իդէալական սէրն էր արծարծվում, միւսի մէջ անասնական, նոր կիրքն էր բորբոքվում։

Երկուսն էլ լուռ էին. երկուսն էլ զբաղուած էին ներքին խօսակցութեամբ։

Սակայն օրիորդի շնչառութիւնը հետզհետէ արագանում էր և նրա զգացմունքների բաժակը լցվում։

—Միւսիւ Արմէն,—ասաց վերջապէս օրիորդը, մօտենալով լուսամտին, դուք սիրում էք ընութիւնը. եկէք նայեցէք։

—Արմէնը մօտեցաւ։

—Դուք շատ էք սիրում ընութիւնը։

—Սիրում եմ այո. և ո՞վ չէ սիրում։ Բայց դուք բոլորովին յափշտակուած էք ընութեան հրաշալիքներով, որովհետև ընութիւնը բռնկում է ձեր մէջ առկայծող բանաստեղծական կայծը։ Եթէ դուք բանաստեղծ չլինէիք, այդչափ չէիք սիրահարուիլ ընութեան վրայ։

—Բայց, Միւսիւ Արմէն, մի՞թէ չի կարող պատահել բանաստեղծ չլինել, միևնոյն ժամանակ բանաստեղծի ոգի ունենալ։ Կան, և նրանց սիրտը տառապանքների ու կսկիծների շտեմարան է, բայց նրանք չեն կարող արտայայտել։ Սակայն փորձիր մի բոպէ գրիչդ ու բառերդ տալ նրան, և դու կըտեսնես որ հանճարներն իսկ կը հիանան։ Կան այնպիսինե-

ըն էլ, որոնց բնականից ոչինչ չէ տուած, փորձում են յայտնել ուրիշների վշտերն ու բերկրանքը, սակայն կեղծում պարզ երևում է նրանց մէջ։

—Ես համաձայն եմ ձեզ հետ,—ասաց Արմէնը լսելով նրա դեղասիրական դատողութիւնները։

—Մի դէպք պատմեմ ձեզ իմ մօտիկ անցեալից և դուք երևակայեցէք թէ որ աստիճան ընութեան սիրահար եմ ես։

—Պատմեցէք, օրիորդ, դուք բաւական լաւ էք, կարծեմ, ցաւն էլ անցաւ, երևի։

—Այո,—ասաց Երանեակը նայելով երկնքին։

Արմէնը նստեց, պատրաստուելով լսել, իսկ Երանեակը ձեռքը պարզեց դէպի երկինք ու սկսեց.

—Օ, ի՜նչ հրաշալի գիշեր է. տեսէք, տեսէք թէ ինչպէս աստղերը շարունակ պատմում են իրար սիրոյ գաղտնիքներ. ինչպէս լուռ նիրհած է ողջ բընութիւնը։ Գիտէք, ճիշտ այսպիսի խաղաղ գիշեր էր. ընկերուհիներիս հետ

զբօսնում էի այգում, հեռու մարդկանցից։ Կանաչ էր այնտեղ։ Նոքա նստեցին, իսկ ես ուղղակի պառկեցի խոտի վրայ։ Ընչում, ծծում էի ես ագահաբար անուշահոտ խոտերի ու ծաղկանց բուրմունքը։ Քաղցր երաժշտութիւն էր լսվում հեռուից և արձագանք տալիս սրտիս լարերին։ Իսկ հայեացքս թափառում էր երկնքի անհուն տարածութեան վրայ։ Ընկերուհիներս բոլորն էլ լուռ, լսում են քաղցր, զգացնող մեղեդին։ Կարծես հիպնոսած՝ դիտում էի ես ընութեան այդ շքեղ սիրուն պատկերը։ Քչքչալով առաջ էր վազում աղբիւրը։ Ծառեր, ծաղիկներ սօսափում էին ողջ։ Վառվում, կրակվում էր երկինքը բոլոր, աստղերն անհոգ խօսակցում էին։ Ահա վերջապէս, ես նկատեցի. մի սիրուն աստղ իմ ուշը գրաւեց։ Ես յափշտակուած տարուեցայ նրանով, հոգով ու մտքով սլացայ դէպի նա։ Բնաւ չէր նման նա միւս աստղերին. բնաւ չէր նսեմանում լուսնի շողքերից, որ ջանք էր անում ծածկելու աստղիս։ Մի անգին գոհար, փայլուն կրակ էր նա, որի ցողերը

գրկած ունէին երկու աչքերս ողջ ջրակալած։ Ո՛րքան երկար դիտում էի նրան, այնքան կարծես մոտենում էի։ Արդէն ես վաղուց թողել էի ինձ և հոգով, մտքով սլանում էի վեր, դէպի անհուն ու անծայր եթերը, դէպի իմ պաշտած, իմ սիրած աստղը, որին վաղ թէ ուշ գրկելու էի։ Երաժշտութիւնը յուզում, լացացնում է ինձ։«Երաժշտութի՜ւն, երաժշտութի՜ւն»,—չշնջացի ես, և սրախնուրը, քրն քոյչ լարերը, անձայն, անշշուկ զարկուեցին միմեանց և ալէկոծում սկսուեց այնտեղ։ Օ, այդ բոպէին երևակայեցի, թէ ճանապարհորդ եմ մի ծովի վրայ, որի ալիքները մեղմիկ, անխռով ողջունում էին իմ բարի գալուստը։ Իսկ ես թիակը ձեռքիս թափով կռվում եմ նրա կատաղի ալիքների հետ և սոսկալի վերջին ճիգերով փրկել եմ ուզում փոքրիկ նաւակս, որ նա կուլ չերթայ անգութ ալիքների սաստիկ հոսանքին։ Նորից ափ իջայ։ Սակայն երբ վերև նայեցի նորից, ա՜խ, այն իմ սիրուն աստղն էլ չկար։ Ես հեկեկանքով դէմքս ծածկեցի երկու դողդոջուն ափերիս մէջ...

Զգիտեմ իսկապէս ծովի մէջն էի ես, թէ կեանքի ծովն էր ինձ հետ խաղ անում։ Այո՛, իմ սիրտս նաւակ էր իրաւ, իսկ զգացմունքներս՝ մի ծով, մի ովկիան։

Այստեղ Երանեակը լռեց և նայեց ուղիղ Արմէնի աչքերին, կարծես սպասելով պատասխանի։ Արմէնը, որ մինչ այդ ընկել էր Երանեակի երևակայութիւնների մէջ և յափշտակուած լսում էր նրա քրնքոյչ սրտի զգացմունքների պատմութիւնը, փոքր լռութիւնից յետոյ բացականչեց.

—Կեցցէ՛ք, օրիորդ, այժմ ես համոզուած եմ որ ձեր մէջ մեծ տեղ է բռնում զգացմունքը, բնութեան սէրը։ Այժմ հաւատացած եմ որ պօէզիան դուք ինքներդ էք ամբողջովին։ Խնդրեմ. եթէ շարունակելի է, ես լսում եմ։

—Յետոյ,—շարունակեց օրիորդը անմիջապէս,—ընկերուհիներս ծիծաղելով, հրհռալով վերկացրին ինձ և ասին.—արտասուքներիցս ամբողջ երեսս ու ձեռքերս թրջուել էին։ Իսկ ես այնքան եմ եղել յափշտակուած, որ չեմ զգացել թէ ինչպէս է պատահել այդ։

«Երանի՜ նրան, որին կըպատկանես դուք», ասաց իր մտքում Արմէնը և վճռեց հայրենիք գնալուն պէս խնդրել նրա ձեռքը։

—Միւսիւ Արմէն, չէ՞ որ դուք էլ սիրում էք բնութիւնը, ասացէք, սիրո՞ւմ էք թէ ոչ. եթէ սիրումէք, ես կարող եմ լամպարը հանգցնել. թող լուսնեակն ինքը լուսաւորէ մեզ. այդպէս, գիտէ՞ք, աւելի բանաստեղծական կըլինի։

—Այո՛, բայց բաւական ուշ է... ես կ'երթամ, իսկ դուք հանգստացէք. այժմ բոլորովին լաւ էք կարծեմ։

—Գիտէ՞ք, ցաւը սաստիկ նեղում է ինձ։ Ձեզ թվում է թէ ես արդէն առողջ եմ, ո՛չ, խօսակցութիւնը միայն ինձ մոռացնել է տալիս այդ. մանաւանդ երբ դուք ինձ մօտ էք։ Բայց դուք ոչինչ չունէ՞ք ասելու... ո՛չ. չլինի թէ ցնորամիտի տեղ էք ընդունում շատախօսիս։

—Բնա՛ւ, օրիորդ, դուք այժմ իմ աչքում, կարող եմ իսկ երդուել՝ Գեօթէի իդէալական Մինոննան էք։

—Երանի թէ այդպէս լինէր։

Տիրեց ճնշող լռութիւն։

Նրանք դարձեալ խօսակցական հայեացքներով նայեցին միմեանց։ Միայն այս անգամ օրիորդի աչքերը վառուեցան և ամբողջ մարմնովը մի սարսուռ անցաւ։

—Ա՜խ, ներեցէ՛ք,—ասաց նա համարեա շփոթուած, հրաշալի է բնութիւնը... Այսպիսի մի քաղցր գիշեր ես կըգերադասէի իմ ամբողջ կեանքին... Երանի թէ՝ այ, տեսնո՞ւմ էք այն ծառերի տակ, ուր հազիւ թափանցում են լուսնի ճառագայթները, ես քնէի... բնութեան ծոցում.. հասկանո՞ւմ էք... Բայց ես բաւական տանջուեցի, տուէ՛ք ձեր ձեռքը։

Արմէնը շփոթուած մեկնեց իր ձեռքը օրիորդին, իսկ վերջինը դողդոջուն ու համբ քայլերով մօտեցաւ մահճակալին։

—Միւսիւ Արմէն, ես, կարծես, պէտք է մեռնեմ... չգիտեմ, միայն ուզում եմ քնել...

Արմէնը մերթ վախում էր, թէ չլինի տենդի մէջ լինի խօսում, մերթ կարծես նրա մէջ խելագարի նշոյլներ էր տեսնում, մերթ շատ լաւ հասկանում էր նրան։

—Օրիորդ, ի սէր Աստուծոյ, հանգիստ քնեցէք. ոչինչ, կ'անցնի, դուք քնեցէք, իսկ ես կ'երթամ, լոյսը արդէն մօտ է։

—Եթէ իրօք թողնելու էք ինձ մենակ,—ասաց օրիորդը ձեռքերը խաչաձև դնելով կրծքին,—ասացէք որ իմանամ, թէ չկայ մէկը, որ ինձ օգնէ... Բայց ես ո՞ւմ դիմեմ... Ես չեմ հասկանում... միայն զգում եմ...

—Օրիորդ, դուք հիւանդ էք. անհանգիստ մի՛ք լինիլ, եթէ ուզում էք որ ես ձեզ մենակ չթողնեմ, կրմնամ, ես նստած կարող եմ ննջել. իսկ դուք հանգիստ քընեցէք, համարելով ինձ ձեր եղբայրը։

«Եղբա՞յր, ասաց իր մտքում օրիորդը, ի՞նչ սոսկալի բառ»։

—Ո՛չ, դուք այստեղ պէտք է քնէք, իսկ ես՝ բաղկաթոռի վրայ. ի՞նչ կայ, թող այս էլ լինի իմ կողմից մի յարգանք... եկէք...

—Օրիորդ,—ասաց նա ընկնելով մըտքերի քաոսը.—մի՛ք չափազանցիլ, խնդրում եմ, հանգիստ քնեցէք. եթէ մի փոքր յարգում էք ինձ... հեռու մի՛ք գնալ...

Այդ էլ բաւ էր Երանեակին, որ իր սիրոյ առարկան մօտիկ է այդպէս։ Թերևս, այնպէս անէ, որ ինքը Արմէնն ընկնի գիրկը։

Արմէնը բաղկաթոռը մօտեցրեց անկիւնին և նստելով գլուխը յենեց աջ ձեռքին ու փակեց աչքերը։

Երանեակը լամպարի կարմիր լոյսը իջեցրեց ու սկսեց հանուել։ Նախ հանեց կօշիկներն ու գուլպաները, երևեցան փղոսկրի պէս փայլուն ու սպիտակ սըրունքները, այնքան մաքուր ու չքնաղ, որ Անահիտն անգամ կը նախանձէր։ Ապա կամաց-կամաց հանեց իւր մնացած զգեստներն ու մնաց միմիայն շապկով։ Այժմ երևացին նրա բազուկները, որ բոլորովին մերկ էին, և կուրծքը, որ կիսով չափ բաց էր, և նրա թափանցիկ շապկի տակից երևում էր նրա մարմարեա նուրբ իրանը։ Այնուհետև մազերը, խոպոպներից ազատելով, փռուեցին նրա մէջքի ու երեսի բոլորտիքը այնպէս, որպէս սև շրջանակի մէջ մի հրաշալի կոյսի պատկեր։

Այդ ժամանակ իր աչքի տակով նայ-

ում էր Արմենին և նրա սիրտը յուզելու համար, մերթ առ մերթ հառաչում էր։

Մէկ-մէկ երբ բացվում էին ակամայից Արմէնի աչքերը և նա տեսնում էր այդ հրաշալի ֆէան, այդ հաւերժահարսը ֆանտաստիկական լուսով շաղախուած, նրա կիսամերկ մարմինը, սիրտը ուժգին տրոփում ու եռ էր գալիս։

«Ահա թէ ի՜նչ է կնոջ գեղեցկութիւնը,—մտածում էր Արմէնը,—ահա թէ ո՞ւր է տանում կնոջ հեշտասիրութիւնը»։

Երանեակը բուռն կրքերից կուրացած, համարեա թէ կորցրել էր ինքնագիտակցութիւնը։

Թվում էր Արմէնին թէ այդ երազ է և ոչ երականութիւն։

—Ա՜խ, Ա՛րմէն, ա՛նգութ, դուք ոչինչ չէք զգում.. դուք մարդկային սիրտ չունիք... սիրտս ձեզ համար է բաբախում. չունչս կտրվում է, չունչ տուէք ինձ... ես փակում եմ աչքերս... ես ձեզ եմ պատկանում...

Այդ մենախօսութեան ամեն մէկ բառը ցնցեցնում էր Արմէնին։ Նորից նայեց

դէպի այն կողմը։ Օ՜ նրա կուրծքը, որ ծովի նուրբ ալիքների նման ծփում էր, նրա բազուկները, նրա ամեն մի շարժ-

մունքը Արմէնին վարանմունքի մէջ էին ձգում։

«Գնա, Ա՛րմէն, գնա, մի՛ վախիր,—թելադրում էր նրան մէֆիստոֆէլեան ձայնը, երջանկացիր այսօր, որովհետև

նա քեզ է պատկանում։ Ի՞նչ կարիք վախենալու. նայիր շուրջդ, տես, ինչ՞ը են անում, յետոյ խուսափիր։ Մի՞թէ բթացել են զգացմունքներդ, երիտասարդական վառ ցանկութիւններդ։ Մի՞թէ հաճելի է քեզ տանջել այդ խեղճ արարածին։ Չէ՞ որ զոհ կ'երթայ, թէ թողնես նրան։ Գնա, երջանկացիր այնպէս, ինչպէս ողջ աշխարհը»...

Նա վեր կացաւ տեղից և հանդարտ ու դողդոջուն քայլերով մօտեցաւ մահճակալին։ Նա ուզեց նախ համբուրել նրա հրաշալի սպինքները. ձեռքը մեկնելով զգաց իր ափի մէջ մի անսովոր զօրութիւն, մի քնքոյշ անմեղութիւն և յանկարծ յետ քաշուեց։

Այդ րոպէին նա յիշեց Սարայեանի պատկերը, որի վարմունքը այնպէս դատափետում էր ինքը, յիշեց Կոստեայի խօսքերը՝ «քեզ ես կըտեսնենք» դառն հեգնանքը և նրա վերջին տեսակցութիւնն ու քինալից քրքիջը նորից կարծես հնչուեց նրա ականջում։—«Մի՞թէ ես այն Արմէնն եմ,—մտածեց նա.—ո՛չ, հեռու ինձնից

ստոր մտքեր, մինչ չեղել ինձ իմ ընտրած շաւղից։ Աստուած իմ, տուր ինձ կամքի ոյժ»։

—Ես փակում եմ աչքերս,—նորից շշնջաց օրիորդը, ես չեմ հասկանում, այլ զգում եմ... ինչպէս լաւ էր, մէկ էլ...

Արմէնը քանիմի վայրկեան վարանումից յետոյ նորից բռնեց նրա ստինքը և այս անգամ խղճի խայթը ուշաթափութեան հասցրեց և յետ-յետ գնաց.—«ի՞նչ եմ անում ես,—ասաց նա, ձեռքը մօտեցնելով իր բոցակէզ ճակատին և լենկելով աթոռի վրայ։ Դաժան մտապատկերները նորից երևան եկան նրա աչքի առաջ։ Նա յիշեց Նեխլիւդովին, յիշեց Կատիւշային և շատ օրինակներ։

Նա վեր կացաւ, միքանի անգամ անցուդարձ արաւ սենեակի մէջ և վերջապէս պայուսակը գցեց վիզը և գլխարկը վերցնելով գնաց դէպի դուռը, սակայն նա կանգնեց սենեակի մէջտեղ և աչքերը տենդային բոցով փայլեցնելով գոչեց.

—Հեռացրէք ձեզանից այդ գարշելի մտքերը, որովհետև չկայ աւելի սոսկալի,

աւելի ծանր, քսամնելի եղերնագործութիւն, քան թէ այն՝ ինչ որ պահանջուէք ինձանից։ Ինչքան էլ կիրքը կուրացրած լինի ձեր աչքերը, սակայն կը գան արթնանալու այնպիսի ժամեր, վայրկեաններ, որ ինքներդ կըսոսկաք, երբ ձեր աղնիւ զգացումները կըպահանջեն իրանց տեղն ու պատիւը։ Օրիորդ Երանեակ, մի հայեացք գցեցէք ձեր ապագայի վրայ, լսեցէք ձեր բարի բնազդին և ինքներդ կըսարսափէք։ Լաւ մտածեցէք թէ մինչև ուր պիտի տանեն այդ ձեր զրգռման դժնդակ վայրկեանները։ Դուք չէք զգում այժմ, սակայն երբ կըհանգչի այդ դիւային կայծը, դուք այն ժամանակ միայն կըզգաք, որ այդպիսի զգացմունքների հետ խաղալ չի կարելի։ Այն զգացումը, որ պատել է ձեզ այժմ երջանկացնելու յուսով, նոյն զգացումը ձեր ամբողջ կեանքն է խորտակելու։ Եթէ ձեզ պատահում են այնպիսիները, որոնք իրանց քմահաճոյքը կատարելու համար կամենում են ձգել ձեզ որոգայթի մէջ, գայթակղեցնել ձեզ, ապա թքեցէք դուք նրանց երեսին, արհամարհեցէք նրանց,

եթէ ուզում էք ձեր անունը սուրբ պահել։ Մի՛ք մոռանալ, օրիորդ, որ վաղ թէ ուշ դուք մայր էք դառնալու. հասկանում էք այդ։

Երանեակը որ դեռ չփոթուած դրութեան մէջ էր գտնվում, վեր թռաւ տեղից և մօտենալով նրան գրկեց.

—Մի՛ք գնալ, մի՛ք գնալ, խղճացէք ինձ, եթէ ոչ վաղը իմ տեղը դուք սառը դիակ կըգտնէք... ա՜խ...

—Ո՛չ—ասաց Արմէնը բորբոքուած, ազատուելով նրա գրկից,—ձեր մէջ մեռցրել էք մարդկային զգացմունքները և տեղը լցրել անասնական կրքերով։ Դուք անցաք բարոյականութեան սահմանից։ Այո՛, այդպէս էք անում չատերդ, բոպէապէս մոռանում էք ամեն ինչ և կոյր աչքերով ընկնում էք ձեր «սիրեցեալի» գիրկը, այսինքն՝ ճիւաղի գիրկը. այնուհետև դուք անբաղդ էք, դուք իսպառ կորած էք համարվում և ի վերջոյ ձեզ գտնում էք մի տան մութ անկիւնում... Դուք ծաղկեայ փնջի նման սրա, նրա ձեռքն էք ընկնում, չմտածելով ձեր ապագայի մասին և վեր-

ջը թառամած, թոշնած զրկվում կենդանութիւնից։ Ի՞նչ էիք իմ աչքում՝ մի Մինոննա, իսկ այժմ՝ մի սարսափելի դիցուհի Մեդերա։ Այժմ, օրիորդ, գնացէք, գնացէք պատմեցէք ձեր ընկերուհիներին, որ Արմէնն այնքան անշնորք գտնուեց, որ խուսափեց այսպիսի դէպքից։ Ասացէք որ Արմէնը մի ցնորամիտ երիտասարդ է։ Սակայն, երբ այս դէպքը պատահի ձեզ ուրիշի հետ, և ձեր ապագան կործանուած կըլինի, դուք այն ժամանակ միայն յիշեցէք իմ խօսքերը՝ *ես ձեր ապագան չուզեցի կործանել։*

Վերջացրեց Արմէնը իր խօսքերը և արագ-արագ դուրս եկաւ սենեակից, թողնելով Երանեակին վերացած ու ապշած դրութեան մէջ։

—Աստուած իմ,—շշնջաց նա և խուլ հեկեկանքով երեսն ի վայր ընկաւ անկողին։

XI

«Խե՜ղճ Երանեակ,—մտածում էր Արմէնը միւս առաւօտ երկաթուղու օթեակում նստած, չի երևում. չլինի՞ թէ մի բան է պատահել, չլինի՞ թէ, ինչպէս ինքն ասաց, ինքնասպանութիւն գործէ։ Թող այդպէս լինի. միևնոյն է, ես նրան կենդանի պէտք է սպանէի, ես նրան յաւիտեան պիտի դժբաղդացնէի. փոխանակ ես իրան սպանելու, թող ինքն իր ձեռքով սպանուի, այդ աւելի լաւ»։

Այսպիսի մտածմունքներով Արմէնը անծանօթ ուղևորների հետ նստած գընում էր հայրենիք։

Ոտքէ առ ոտքէ սպասում էր նա հայրենիքի տեսութեան։ Միքանի ժամ ևս, և նա շուտով կը տեսնէր իր ցանկալի հայրենիքը։

Խուռն բազմութիւնը լցուած էր պը-

ատֆօրմի վրայ և ամենի աչքերը սևեռած սպասում էին իրանց սիրելիներին։

Արմէնն իջաւ իր իր պայուսակով, անցաւ բազմութեան միջից։ Եւ ո՞վ զարմանք—մի օրիորդ որի աչքերում խաղում էին արտասուքի կաթիլները, մօտեցաւ նրան և ձեռքը սեղմեց իր դողդոջուն ձեռով։

XII

—Օրիորդ Երանեա՛կ. դո՞ւք...

—Ասացէք, Միւսիւ Արմէն,—ընդհատեց նրան օրիորդը գլուխը խոնարհելով, ինչո՞վ կարող եմ պարտքս կատարած համարել։ Դուք ինձ յաւիտեան պարտաւորեցրիք,—ասում էր նա ճնշուած կոկորդով.—շնորհակալ եմ որ դուք իմ կեանքն աղատեցիք օտարոտի կործանումից, որ դուք... ախ, չգիտեմ կը ներէ՞ք ինձ, թէ դարձեալ...

—Բաւական է, օրիորդ,—հանգստացրեց

նրան Արմէնը.—ուրախ եմ անսահման որ դուք զգացիք ձեր սխալը։ Մի՛ք լալ. այն ժամանակ կիրքը կուրացրել էր ձեր աչքերը և դուք այլևս ուրիշ ոչինչ չէիք տեսնում։ Չէիք մտածում, որ բոպէական ցանկութիւնը ձեզ դէպի կորուստ պիտի տանէր։ Չէիք մտածում, որ ձեզ սպասում է հասարակութիւնը, որ դուք վերջապէս ծնողներ ունիք, որոնք թերևս սրտատրոփ սպասում են ձեզ, որ դուք...

—Իսէր Աստուծոյ,—ընդհատեց օրիորդը, մի՛ք յիշեցնիլ. ամօթի խայթը կրծում է սիրտս... բացի դրանից ինձ սպասում է իմ նշանածս, ասաց նա և արտասուքի մի խոշոր կաթիլ գլորուեց նորա մաքուր այտից։

Այդ ամենակարևոր գաղտնիքը դուք ծածկե՞լ էիք ինձնից,—ասաց Արմէնը զարմացած։

—Դուք ինձ յաւիտեան պարտաւորեցիք։

—Օրիորդ, իմ պարտականութիւնն էր այդպէս վարուել։

—Ներկայիս երիտասարդները,— ա-

սաց Երանեակը թաշինակը մօտեցնելով աչքերին,—ոչ թէ ազատում են մեզ՝ խեղճ արարածներիս, այլ աշխատում են գցել

անդունդը. այնուհետև նրանք մնում են նոյնը, իսկ մենք տանջվում ենք ընդմիշտ։ Դուք միայն ինձ չփրկեցիք, այլ և շատե-

ին։ Դուք այժմ իմ եղբայրն էք, իսկ ես՝ ձեր քոյրը։ Օ՜, իմ եղբայր, մինչև մահ պիտի հնչուի ականջիս ձեր վերջին խօսքերը՝ «ես ձեր ապագան չուզեցի կործանել»։ Մնա՛ք բարեաւ. ես միշտ կաղօթեմ ձեզհամար, ես միշտ կը յիշեմ ձեր. մնա՛ք բարև։

Երկուսն էլ վերջին անգամ սեղմեցին միմեանց ձեռքը և բերկրանքով լի բաժանուեցին։

XIII

Միւս օրը Արմէնն գրեց Սէդ-Վարդին այդ դէպքի բոլոր մանրամասնութիւնները և միքանի ժամանակից յետոյ ստացաւ մի նամակ այսպիսի բովանդակութեամբ.

«Անգին և անզուգական ընկեր իմ Արմէն. «Կարդացի գրածդ նամակի բոլոր մանրամասնութիւնները այն ժամանակ, երբ հաւաքուել էին քո բոլոր լաւ և վատ

ընկերները։ Նոյնիսկ Կոստեան և ուրիշ-ները զգացուեցին։ Մենք մի սիրտ, մի հոգի դարձած, ողջունում և գովում ենք քո վարմունքը։ Երանեակի զղջումը մեզ ուրախութիւն պատճառեց։ Կեցցես Արմէն, որ քո նրբազգած սրտով, քո կամքի տոկունութեամբ և հաստատամտութեամբ կեանքի կռիւը յաջողութեամբ տարար։ Ընդունիր ամենից ջերմագին համբոյրներ։ Մենք բոլորս այսուհետև «Արմէնականներ» ենք դառնալու։

«Քոյդ՝ Սէգ-Վարդ և Ընկերներ»։

1902 թ.

ՎԵՐՋ

[illegible]

28
44

2013
13104